

**ՎՐԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ
ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ**

Միխայիլ Աղաջանյան

Աշխատանքն անդրադառնում է Վրաստանում ազգային փոքրամասնությունների կարգավիճակի իրավական պաշտպանվածության հրատապ թեմային: Այս առումով, որպես հասարակական հարաբերությունների անհրաժեշտ միջպետական կարգավորման հիմք դիտարկվում են միջազգային իրավունքի ընդունված սկզբունքներն ու նորմերը, համեմատական վերլուծություն է անցկացվում ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության ոլորտում Վրաստանի ներքին օրենսդրության գործող և հանձնարարվող ու իրավաբանորեն պարտադիր բնույթի միջազգային իրավական նորմերի միջև: Փորձ է արվում ոչ միայն ի հայտ բերել այս ոլորտում Վրաստանի ներքին օրենսդրության իրավական անհամապատասխանությունները միջազգային նորմերին, ընդգծել ոլորտում տիրող իրավական թերությունները, այլև բերել հանրապետության ներպետական կյանքում տեղ գտած՝ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների պաշտպանված չլինելու փաստացի օրինակներ:

Ներածություն

Ազգային փոքրամասնությունների իրավունքների և ազատությունների պաշտպանությունը ժողովրդավարական և իրավական լինել հավակնող պետության քաղաքական գործունեության անհրաժեշտ տարրն է: Առանց դրանց ամրապնդման, հետագա կատարելագործման և ամենակարևորը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան անշեղ իրականացման, անհնար է բազմազգ պետության քաղաքակիրթ միջազգային սոցիալացումը:

Բազմազգ պետությունը օբյեկտիվ պատմական իրողություն է: Ժամանակակից բազմազգ պետության սոցիալ-տնտեսական և իրավական զարգացման միակ ճանապարհը քաղաքակիրթ քաղաքացիական հասարակության և ժողովրդավարական, իրավական պետության ուղին է: Այդ պետության ազգային փոքրամասնությունների իրավունքներն ու ազատությունները պետք է ամրագրված լինեն օրենսդրությամբ և երաշխավորվեն բոլոր ազգերի ու ազգությունների համար ընդհանուր պետական կազմավորման ամբողջ ուժով ու հզորությամբ: Նման բազմազգ քաղաքական օրգանիզմում, բազում ազգերի և ազգությունների քաղաքական միությունում, գոյություն

ունեն ազգային զարգացման առանձնահատուկ բևեռներ, սակայն դրանցից և ոչ մեկը չի հակասում մյուս բևեռներին այն հարցերում, որոնք առնչվում են միասնական բազմազգ պետության զարգացմանը:

Միջազգային հումանիտար իրավունքը ազգային փոքրամասնությունների իրավունքների և ազատությունների պաշտպանության բազմաթիվ նորմեր ունի: Այն հետամուտ է մեկ անհրաժեշտ նպատակի՝ բացառել խտրականությունը ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց նկատմամբ և, դրան համապատասխան, ապահովել նրանց կարգավիճակի իրավական պաշտպանվածությունը: Բացի ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց պաշտպանության անհատական ուղղվածությունից, միջազգային հումանիտար իրավունքն իր զինանոցում ունի նաև փոքրամասնությունների կոլեկտիվ իրավական ապահովության և պաշտպանության սկզբունքներ ու նորմեր, որոնք հիմնականում արտահայտվում են ազգային փոքրամասնության ինքնորոշման իրավունքում:

Այսպիսով, մի խմբում կարելի է միավորել ազգային փոքրամասնությունների կարգավիճակն ամրապնդող նորմերը, որոնցում հիմնական շեշտը դրվում է տվյալ կարգավիճակի երաշխավորվածության և խտրականությունը բացառելու վրա և որոնք փոքրամասնություններին տալիս են որոշակի իրավունքներ ու ազատություններ: Մյուս խմբում առանձնացվում են տեղական ինքնակառավարման ոլորտին վերաբերող նորմերը, որոնք, մի կողմից՝ անցնում են առաջին խմբի նորմերից, մյուս կողմից՝ ազգային փոքրամասնություններին առնչվող նորմերի ամբողջ իրավական համախմբի պաշտպանության ու դրանց իրականացման առավել իրական ու զգալի նյութականացումն են:

1. Ազգային փոքրամասնությունների իրավունքների և ազատությունների պաշտպանության իրավաբանորեն պարտադիր և հանձնարարվող ստանդարտները

Վրաստանի Հանրապետությունը միջազգային միջկառավարական կազմակերպությունների անդամ է, որոնց շրջանակներում ստանձնել է իր տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների պաշտպանության միջազգային իրավական պարտավորություններ: Այսպես, օրինակ, Վրաստանը Եվրախորհրդի (ԵԽ) անդամ է, որի շրջանակներում ընդունվել են ազգային փոքրամասնությունների իրավունքների և ազատությունների պաշտպանության բազմաթիվ իրավական ակտեր: ԵԽ-ում ընդգրկվող պետությունները պետք է ստանձնեն մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին 1950թ. Եվրոպական կոնվենցիայով նա-

խատեսվող պարտավորությունները և ընդունեն նրա վերահսկիչ մեխանիզմների ամբողջությունը: ԵՄ-ում նոր անդամների ընդգրկման գլխավոր պայմաններն են ժողովրդավարական իրավական կարգի առկայությունն ու ազատ, հավասար և համընդհանուր ընտրությունների անցկացումը: Մեզ հետաքրքրող թեմայի՝ ազգային փոքրամասնությունների պաշտպանության հետ կապված՝ նշենք, որ հենց ԵՄ-ն է այն միջազգային միջկառավարական կազմակերպությունը, որի իրավական փաստաթղթերը կարելի է վկայակոչել իբրև իրավաբանորեն պարտադիր: Սակայն տվյալ ակտերը ԵՄ անդամ երկրների համար պարտադիր են ոչ միայն իրենց անդամակցության պատճառով: Որպեսզի կոնվենցիաներն իրավաբանորեն պարտադիր լինեն այն պետությունների համար, որոնք դրանց հետ իրենց համաձայնությունը հայտնել են դրանք ստորագրելու միջոցով, անհրաժեշտ է անցնել միջպետական օրենսդրությամբ նախատեսված բոլոր փուլերը: Դա, որպես կանոն, կոնվենցիաների վավերացման և ուժի մեջ մտնելու գործընթացն է:

Վրաստանը ստորագրել է ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության 1995թ. ԵՄ Շրջանակային կոնվենցիան¹, բայց դրա վավերացումը մշտապես հետաձգում է:

1995թ. ԵՄ Շրջանակային կոնվենցիան խիստ պարտադրող բնույթ ունի: Կոնվենցիայի II բաժնի (որտեղ թվարկվում են ազգային փոքրամասնությունների իրավունքները) 16 հոդվածներից 12-ը կազմված են բացառապես պետությունների պարտադրելու դիրքորոշումներից:

Կոնվենցիայի դրույթներն իրավաբանորեն հստակ են ձևակերպված և երկիմաստ մեկնաբանությունների տեղ չեն թողնում: Կոնվենցիայով նախատեսված է պետությունների ստանձնած պարտավորությունների իրականացումը վերահսկելու մեխանիզմը (հոդվածներ 24-26): Դրանց համապատասխան 1995թ. Շրջանակային կոնվենցիայի նորմերի իրականացման վերահսկման գործընթացին մասնակցում են ԵՄ նախարարների կոմիտեն, գլխավոր քարտուղարը, խորհրդատվական կոմիտեն, որը գործում է որպես կազմակերպության նախարարների կոմիտեին օժանդակող մարմին: Կոնվենցիայի 25-րդ հոդվածն ուղղակի կարգադրում է. «Այս կամ այն մասնակցի նկատմամբ տվյալ Շրջանակային կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում մասնակիցը Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին է հանձնում այն օրենսդրական և այլ միջոցառումների մասին ամբողջական տեղեկատվությունը, որոնք ընդունվել են տվյալ Շրջանակային կոնվենցիայում շարադրված սկզբունքների իրականացման համար»:

¹ Երկրի համար Եվրոպայի խորհուրդ մտնելու օր է համարվում 1949թ. ԵՄ Կանոնադրության ուժի մեջ մտնելու օրը (Վրաստանի համար դա 1999թ. ապրիլի 27-ն է) և մարդու իրավունքների ու հիմնական ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիայի ստորագրման (բայց ոչ ուժի մեջ մտնելու) օրը: Վրաստանի համար դա նույն 1999թ. ապրիլի 27-ն է:

Վրաստանի կողմից 1995թ. Շրջանակային կոնվենցիան չվավերացնելը չի ազատում նրան ազգային փոքրամասնությունների իրավունքներն ապահովելուց և պաշտպանելուց: Չնայած մարդու իրավունքների և հիմնական ազատությունների մասին կոնվենցիայի 14-րդ հոդվածն ընդհանուր է, բայց ազգային փոքրամասնությունների նկատմամբ իրավաբանական պարտավորությունների ստանձնման, նրանց իրավունքների ու ազատությունների պաշտպանման հարցում ոչ խտրական մոտեցման բավարար հիմք է հանդիսանում (1950թ. կոնվենցիայի 14-րդ հոդված. «Տվյալ կոնվենցիայում շարադրված իրավունքներից և ազատություններից օգտվելն ապահովվում է առանց որևէ խտրականության... ըստ ազգային փոքրամասնության պատկանելության...»):

Ազգային փոքրամասնությունների իրավունքների և ազատությունների ոլորտում ունիվերսալ (Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին 1966թ. միջազգային պակտը, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին 1966թ. միջազգային պակտը, Ազգային կամ էթնիկական, կրոնական, լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների մասին 1992թ. հռչակագիրը, Ամեն տեսակ ռասայական խտրականության վերացման մասին 1965թ. միջազգային կոնվենցիան) և շրջանային (Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին 1995թ. Շրջանակային կոնվենցիան, Շրջանային լեզուների և փոքրամասնությունների լեզուների 1992թ. եվրոպական խարտիան և այլն) միջազգային իրավական սկզբունքներն ու նորմերը համալիր բնույթ ունեն և իրենց համակարգային մոտեցման համապատասխան ուղղված են ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց անձնական, քաղաքական ու սոցիալ-տնտեսական անհատական բոլոր իրավունքների ճանաչմանն ու ապահովմանը, պաշտպանությանն ու երաշխավորվածությանը: Փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների պաշտպանության համախումբը հիմնականում արտահայտվում է անհատական միջոցների ընդունմամբ: Իսկ ինքնակառավարման իրավունքն անհիմաստ է առանց կոլեկտիվայնության հատկանիշի, առանց ազգային փոքրամասնությանը պատկանող անձանց մտադրությունների ու ջանքերի միատեղման, ինչն էլ հանգեցնում է «ինքնակառավարման իրավունք» որակապես նոր իրավական հասկացության ըմբռնմանը:

Ազգային փոքրամասնության ինքնակառավարումը, որը կարող է ունենալ տարածքային կամ ոչ տարածքային բնույթ, ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների և ազատությունների իրական պաշտպանության ու ապահովման նշանակալի փաստարկ և օբյեկտիվ օրինաչափություն է համարվում: Ունիվերսալ և շրջանային իրավական

փաստաթղթերում նույնպես համալիր մոտեցում է ցուցաբերվում ազգային փոքրամասնությունների ինքնակառավարման իրավունքի ապահովմանը: Այն ներառում է. 1) սեփական երկրի կառավարմանը մասնակցելու իրավունքը, որը նշանակում է նախ՝ մասնակցություն պետական գործերի վարմանը, երկրորդ՝ ընտրելու և ընտրվելու իրավունք, երրորդ՝ պետական ծառայության անցնելու իրավունք, 2) հայրենակիցների հետ անդրսահմանային կապերի իրավունքը՝ երկու երկրների տեղական ինքնակառավարման մարմինների միջև համագործակցություն հաստատելու նպատակով:

Վերջին իրավունքն անհրաժեշտ է հատկապես այնտեղ, որտեղ գոյություն ունի էթնիկական, լեզվական և կրոնական հատկանիշների ամբողջական նմանություն, ինչպես նաև այնտեղ, որտեղ առկա է անմիջական տարածքային շփումը երկու համագործակցող կողմերի ինքնակառավարման մարմինների միջև:

Հատկանշական է, որ սահմանամերձ լինելու հատկանիշը պարտադիր չէ տարածքային համայնքների միջև կապեր հաստատելու համար: Այս մասին վկայում է միջտարածքային համագործակցության վերաբերյալ տարածքային համայնքների և իշխանությունների մերձսահմանային համագործակցության մասին 1998թ. Եվրոպական շրջանակային կոնվենցիայի թիվ 2 արձանագրությունը. «...Իրենց գործառույթների արդյունավետ իրականացման համար տարածքային համայնքները և իշխանություններն ավելի շատ համագործակցում են ոչ միայն հարևան պետությունների իշխանությունների (մերձսահմանային համագործակցություն), այլ նաև ոչ հարևան օտարերկրյա պետությունների իշխանությունների հետ, որոնց հետ ընդհանուր շահեր ունեն (միջտարածքային համագործակցություն), և դա անում են ոչ միայն տարածքային համայնքների ու իշխանությունների մարմինների և ասոցիացիաների մերձսահմանային համագործակցության շրջանակներում, այլ նաև երկկողմանի մակարդակում» (կոնվենցիայի ներածական):

Ինքնակառավարման իրավունքի իրավաբանական կոմպլեքսայնությունն արտահայտվում է նաև նրանում, որ անձը՝ որպես տվյալ պետության քաղաքացի, իրավունք ունի մասնակցելու պետության՝ որպես առավել ամբողջական կազմավորման, ընդհանուր, հրապարակային գործերի կառավարմանը (պետության կենտրոնական և տարածքային մարմիններում ընտրելու և ընտրվելու, պետական պաշտոն զբաղեցնելու իրավունք) և, միևնույն ժամանակ, իրավունք ունի մասնակցելու միասնական պետության տվյալ տարածքի տեղական, առանձնահատուկ գործերի կառավարմանը: Ազգային փոքրամասնության ներկայացուցչի այս կարգավիճակը պետք է ամրագրվի ցանկացած ժողովրդավարական պետության օրենսդրությամբ: Վերոնշյալ իրավական համախմբին ավելանում են նաև սեփա-

կան լեզվական, կրոնական, մշակութային, ընդհանուր առմամբ՝ ազգային ուրույնության պահպանման իրավունքները, ինչպես նաև պետության կողմից ազգային իրավունքների լրացուցիչ պաշտպանության իրավունքը:

Ինքնակառավարման իրավունքի իրավաբանական համախումբը լրացվում է ինքնակառավարման ապահովման մի ամբողջ շարք այլ բաղադրատարրերով, որոնք, առաջին հերթին, քաղաքական և տնտեսական են: Առաջինը ենթադրում է ինքնակառավարման տարածքային և ոչ տարածքային ինստիտուտների ամրապնդում՝ պետական կամքի արտահայտմամբ, ինքնակառավարման իրավունքի ճանաչում իշխանական, պետական կառույցների կողմից (ի վերջո, սա արտահայտվում է իրավաբանորեն՝ ամրապնդվելով սահմանադրությամբ, օրենքներում և իրավական նորմատիվ այլ փաստաթղթերում, ստանձնելով տվյալ ոլորտում միջազգային նորմերը պահպանելու պարտավորություն): Երկրորդ բաղադրիչը նշում է ինչպես տվյալ իրավունքն իրականացնելու հնարավորության պայմանները, այնպես էլ դրա իրականացման արդյունավետության հետևանքը: Այլ խոսքերով, մի կողմից՝ որպեսզի ինքնակառավարման իրավունքը կայանա, այն պետք է ունենա իր նյութական-ֆինանսական բազան (բյուջե, սեփականություն, մի խոսքով՝ տեղական տնտեսական հարցերը սեփական ուժերով լուծելու հնարավորություն), մյուս կողմից՝ արդյունավետորեն օգտագործել իր ինքնակառավարման տնտեսական հիմքը՝ տեղի սոցիալական խնդիրներն անմիջականորեն լուծելու նպատակով:

Առաջ է գալիս ինչպես միջազգային հանրության, այնպես էլ (և առաջին հերթին) պետության կողմից ինքնակառավարման իրավունքին աջակցելու անհրաժեշտությունը՝ միջազգային կազմակերպությունների հնարավոր ընդգրկմամբ: Միջազգային հանրության դերն ընդհանուր առմամբ կրում է ընդհանուր ժողովրդավարական, իրավական տեսակետից՝ ուղղորդող բնույթ, ինչը ենթադրում է ինքնակառավարման հարցերի լուծման քաղաքակիրթ նմուշի ստանդարտացում: Ինքնակառավարման իրավունքի և ազգային փոքրամասնությունների իրավունքների կապը միջազգային իրավական փաստաթղթերում (այնտեղ, ուր դրա համար առկա են օբյեկտիվ պայմաններ) հստակ երևում է: Տվյալ հարցերն առավել որոշակի ու մանրամասն կարգավորվում են ԵԱՀԿ և ԵԽ մակարդակներում:

ԵԱՀԿ-ն տալիս է առաջադրված խնդիրների պատասխանների որոնման ուղղությունները, ձևավորում է ազգային փոքրամասնությունների ինքնակառավարման քաղաքական նորմերի բազան՝ պետությունների համագործակցության և անվտանգության հարցերի տեսանկյունից: ԵԽ-ը այս ամենին տալիս է իրավաբանական տեսք՝ մասնակից երկրների համար պարտադիր կոնվենցիաների և դրանց արձանագրությունների միջոցով:

Երկու կազմակերպությունների միջև այս ինքնատիպ «աշխատանքի բաժանման» մասին նշում է 1994թ. ԵԱՀԽ Բուդապեշտի գազաթափոցի որոշումը, որի VIII բաժնի 22-րդ կետում նշվում է «...Եվրոպայի խորհրդում ազգային փոքրամասնությունների պաշտպանության Շրջանակային կոնվենցիայի ընդունման մասին, որը *հենվում է այս ասպարեզում ԵԱՀԽ նորմերի վրա և զարգացնում է դրանք*» (ընդգծումը մերն է- Մ.Ա.): Հարկ է նշել նաև, որ եթե ինքնակառավարման իրավունքի իրականացման պարագայում խտրականությունից ազգային փոքրամասնությունների պաշտպանության հարցերով զբաղվում է ԵԱՀԿ ազգային փոքրամասնությունների գծով Գերագույն հանձնակատարը՝ բազային բնույթ կրող հանձնարարականների ձևակերպման միջոցով¹, ապա ԵԽ-ը դրանց պետք է տա իրավաբանորեն պարտադիր տեսք:

Այս առումով հատկանշական են 1999թ. Լունդի հանձնարարականները: Այս փաստաթղթում ինքնակառավարման իրավունքը ենթադրում է ինքնակառավարման հարցերի շուրջ որոշումների նկատմամբ վերահսկողության իրավունք: Դրանով իսկ առաջանում է տեղական և ընդհանուր պետական մակարդակների միջև ղեկավարման և լիազորությունների ոլորտների գատորոշման հարցը: Այս հարցն առավել սուր կերպով դրված է ԱՊՀ մի շարք երկրներում, քանի որ նախկին ԽՍՀՄ հանրապետությունների քաղաքական կյանքում ղեկավարման և լիազորությունների ոլորտների գատորոշման հարցերին ավելանում են նաև ազգային տարանջատման խնդիրները:

Այս առումով Լունդի հանձնարարականներում նշվում է, որ «էթնիկական չափանիշները ոչ մի պարագայում տարածքային մեխանիզմների կազմավորման որոշիչ չեն հանդիսանում» (կետ 14): Մինչև ժամանակ, ինքնակառավարման ոչ տարածքային մեխանիզմների (որոնք հաճախ անվանվում են «անձնական» կամ «մշակութային» ինքնավարություն) մասին ասվում է, որ դրանք «առավել կիրառելի են այս կամ այն խմբի՝ աշխարհագրական առումով ոչ կոմպակտ բնակության պարագայում» (կետ 17): Այնուհետև հանգուցվում են ինքնակառավարման տարածքային մեխանիզմները և կենտրոնական ու տեղական իշխանությունների իրավասությունների համարժեք գատորոշման սկզբունքը (սուբսիդյանության սկզբունք): Իսկ ինքնակառավարման ոչ տարածքային մեխանիզմները կապվում են փոքրամասնությունների մշակութային իրավունքների ապահովման ծրագրի սկզբունքի հետ (ՋԼՄ, լեզու, ընտանիք, կրոն):

ԵԽ իրավաբանական փաստաթղթում՝ տեղական ինքնակառավար-

¹ Ազգային փոքրամասնությունների կազմավորման իրավունքների գծով 1996թ. Հասագայի հանձնարարականները, Ազգային փոքրամասնությունների լեզվական իրավունքների գծով 1998թ. Օսլոյի հանձնարարականները, Հասարակական-քաղաքական կյանքին ազգային փոքրամասնությունների արդյունավետ մասնակցության մասին 1999թ. Լունդի հանձնարարականները:

ման մասին 1985թ. Եվրոպական խարտիայում սահմանվում է հոգուտ տեղական ինքնակառավարման լիազորությունների գատորոշման ոլորտում սուբսիդայնության սկզբունքի պահպանման հասկացությունը. «Հրապարակային լիազորությունների իրականացումը, որպես կանոն, գերազանցապես պետք է դրվի քաղաքացիներին առավել մոտ իշխանության մարմինների վրա: Որևէ գործառույթի հանձնումը իշխանության մեկ այլ մարմնի պետք է կատարվի որոշակի խնդրի ծավալի ու բնույթի, ինչպես նաև արդյունավետության ու խնայողության պահանջների հաշվառմամբ» (հոդված 4):

Լիազորություններով օժտման հարցը, դրանց ծավալն ու որակական հագեցածությունը պետք է կախման մեջ դրվեն ինքնակառավարվող տարածքում ապրող ազգային փոքրամասնության շահերից, որը տվյալ տարածքի համար արդեն ոչ թե փոքրամասնություն է, ինչպես ընդհանուր պետական մակարդակում, այլ մեծամասնություն՝ այստեղից բխող բոլոր սոցիալ-տնտեսական, մշակութային և այլ արտոնություններով:

Ազգային փոքրամասնությունների շահերի մասին խոսվում է Լուինդի հանձնարարականների 21-րդ կետում. «Լիազորությունները, որոնք տրվում են տարածքային հիմքի վրա՝ փոքրամասնությունների առավել արդյունավետ մասնակցությունն ապահովելու համար, պետք է իրականացվեն այն փոքրամասնությունների շահերի պատշաճ հաշվառմամբ, որոնց վրա դրանք տարածվում են: Վարչական-գործադիր իշխանությունը պետք է հաշվետու լինի համապատասխան տարածքի ամբողջ բնակչությանը»:

2. Վրաստանի օրենսդրության նորմերը, դրանց և ազգային փոքրամասնությունների պաշտպանության միջազգային նորմերի համեմատությունը

Դիտարկենք ազգային փոքրամասնությունների պաշտպանության և տեղական ինքնակառավարման ոլորտներում Վրաստանի պետաիրավական նորմերի իրականացման հարցը:

Վրաստանի օրենսդրությունը նշված ոլորտներում բնութագրվում է բացթողումներով և ժողովրդավարական գործընթացներից կտրվածությամբ: Չնայած ազգային փոքրամասնությունների պաշտպանության հիմնական սկզբունքներն իրենց արտահայտությունն են գտել Վրաստանի 1995թ. սահմանադրությունում և ոլորտին վերաբերող օրենքներում, սակայն մինչև օրս հանրապետությունում չի ընդունվել անմիջապես փոքրամասնությունների իրավունքներն ու պարտավորությունները կարգավորող և նրանց կարգավիճակը սահմանող օրենք: Ուստի վերլուծության մեջ առանձնացվել են մեզ հե-

տաքրքրող նորմերը և դրանց իրականացման գործընթացը:

Դիտարկենք ընդհանուր բնույթի նորմերը, որոնք ամրագրված են Վրաստանի սահմանադրությունում:

Սահմանադրության 3-րդ հոդվածը նախատեսում է, որ «Վրաստանի պետական բարձրագույն մարմինների բացառիկ ղեկավարմանն է վերաբերում՝ ա) օրենսդրությունը... մարդու իրավունքների և ազատությունների մասին»: Դրանով իսկ պետությունը ոչ միայն իրավասու է կարգավորել մարդու իրավունքների և ազատությունների հետ կապված հասարակական հարաբերությունները, այլև պարտավոր է ժողովրդավարական ճանապարհով իրականացնել այդ կարգավորումը՝ ելնելով այն բանից, որ վրացական պետության քաղաքական կարգի ձևը ժողովրդավարական հանրապետությունն է (մաս 2, հոդված 1):

6-րդ հոդվածն ամրագրում է, որ Վրաստանի օրենսդրությունը պարտադիր կերպով պետք է համապատասխանի միջազգային իրավունքի համընդհանուր սկզբունքներին ու նորմերին, ինչպես նաև նշում է, որ «Վրաստանի սահմանադրությանը չհակասող միջազգային պայմանագրերը կամ Վրաստանի համաձայնագրերը ներպետական փաստաթղթերի համեմատ իրավաբանական գերիշխող ուժ ունեն»:

Մեզ հետաքրքրող հարցի դիտարկման տեսանկյունից կարևոր են սահմանադրության 6-րդ և 7-րդ հոդվածները, որոնցում խոսվում է Վրաստանի կողմից մարդու համընդհանուր իրավունքների և ազատությունների ճանաչման ու պահպանման մասին՝ «որպես մարդկային անանց և բարձրագույն արժեքներ»: Ավելին, «իշխանություն իրականացնելիս ժողովուրդը և պետությունը սահմանափակված են այդ իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջապես գործողներ» (հոդված 7): Եթե Վրաստանում սահմանադրական նորմերը իրապես պահպանվեին և իրականացվեին¹, ապա հանրապետության Հիմնական օրենքի թվարկված հոդվածները որոշակի իմաստով բավական կլինեին ազգային փոքրամասնությունների պաշտպանության համար՝ ելնելով տվյալ ոլորտի միջազգային ստանդարտներից: Իսկապես, եթե Վրաստանն ընդունում և պահպանում է մարդու համընդհանուր իրավունքները և ազատությունները, և Վրաստանի օրենսդրությունն էլ համապատասխանում է միջազգային իրավունքի համընդհանուր սկզբունքներին և նորմերին, ապա ազգային փոքրամասնությունների իրավունքներն ու ազատություններն իրենց հայեցակարգային հիմքով, որպես մարդու համընդհանուր իրավունքների ու ազատությունների մաս, հանդիսանում են անմիջականորեն գործող, քանի որ դրանք «գեր-

¹ «Վրաստանի սահմանադրությունը պետության Հիմնական օրենքն է: Մյուս բոլոր իրավական փաստաթղթերը պետք է համապատասխանեն սահմանադրությանը» (մաս 1, հոդված 6):

իշխող իրավաբանական ուժ ունեն ներպետական փաստաթղթերի համեմատ» (մաս 2, հոդված 6): Բայց իրականությունը հեռու է սահմանադրությունում ամրագրվածից, և փոքրամասնությունների իրավունքներն ու ազատությունները ոչ միայն չեն համապատասխանում միջազգային իրավունքի համընդհանուր սկզբունքներին և նորմերին, այլև «գուրկ» են վրացական օրենսդրի և առավել ևս՝ գործադիր իշխանության ուշադրությունից:

Սահմանադրության 14-րդ հոդվածի համաձայն՝ բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև՝ անկախ ռասայական, լեզվական, կրոնական, ազգային, էթնիկական պատկանելությունից: 19-րդ հոդվածը երաշխավորում է խոսքի, կարծիքի, խղճի, դավանանքի և համոզմունքների ազատություն: Վրաստանի քաղաքացիների քաղաքական իրավունքներով նախատեսվում է «ստեղծել քաղաքական կուսակցություններ, այլ քաղաքական միավորումներ և մասնակցել դրանց գործունեությանը» (հոդված 26): Կրթություն ստանալու և դրա ձևն ընտրելու իրավունք ունի յուրաքանչյուր ոք, ընդ որում՝ «պետությունն ապահովում է կրթական ծրագրերի համապատասխանությունը միջազգային կանոններին և ստանդարտներին» (հոդված 35): Ելնելով սահմանադրության 38-րդ հոդվածից, որն ամրագրում է քաղաքացիների իրավահավասարությունն անկախ լեզվական, ազգային, էթնիկական և կրոնական պատկանելությունից, Վրաստանի բոլոր քաղաքացիներն ունեն հավասար իրավունքներ երկրի սոցիալական, տնտեսական, մշակութային և քաղաքական կյանքում: Նույն հոդվածում խոսվում է բոլոր քաղաքացիների՝ «ազատ, առանց որևէ խտրականության և միջամտության սեփական մշակույթը զարգացնելու, անձնական կյանքում և հրապարակայնորեն մայրենի լեզվից օգտվելու» իրավունքի մասին¹: Վրաստանի սահմանադրության 38-րդ հոդվածի 3-րդ մասում ընդգծվում է. «Փոքրամասնությունների իրավունքների իրականացումը չպետք է հակասի Վրաստանի ինքնիշխանությանը, պետական կարգին, տարածքային ամբողջականությանը և քաղաքական անկախությանը»: Արժե նշել հետևյալ փաստը: Երկրի սահմանադրության III գլխի նշված և ոչ մի իրավունքի ու ազատության համար սահմանափակումներ չեն նախատեսված 46-րդ հոդվածում նշված արտակարգ կամ ռազմական իրադրության դեպքում:

Նշենք որոշակի իրավունքների և ազատությունների մասին:

1. Խոսքի և մայրենի լեզվից օգտվելու ազատություն. - Վրաստանի 1997թ. «Զանգվածային լրատվական միջոցների մասին» օրենքին համապատասխան՝ «Վրաստանի Հանրապետությունն իր տարածքում ապրող բոլոր ազգային փոքրամասնությունների համար ապահովում է տեղեկատվու-

¹ Կարևոր է, որ հղում է կատարվում տվյալ նորմի՝ միջազգային իրավունքի համընդհանուր սկզբունքներին և նորմերին համապատասխանությանը (մաս 1, հոդված 38):

թյան ստացումն ու տարածումը իրենց մայրենի և այլ լեզուներով» (հոդված 3): Ըստ այս օրենքի՝ չի թույլատրվում ԶԼՄ չարաշահումը. արգելվում է ռասայական, ազգային, կրոնական անհանդուրժողության քարոզչությունը (հոդված 4): Վրաստանի քրեական օրենսգրքի 72-րդ և 75-րդ հոդվածները քրեական պատասխանատվություն են նախատեսում ազգային, ռասայական և կրոնականատելություն քարոզելու համար: Խոսքի ազատությունն ազդեցության լայն դաշտ ունի հասարակական կյանքի բոլոր կողմերի ժողովրդավարացման վրա: Ազգային փոքրամասնությունների համար այդ ազատությունը՝ կապված մայրենի լեզվից օգտվելու իրավունքի հետ, նրանց քաղաքական, տնտեսական և մշակութային կենսագործունեության բոլոր հարցերի վերաբերյալ ազատ կարծիք արտահայտելու բնույթ ունի: Որպեսզի ազգային փոքրամասնությանը պատկանող անձինք օբյեկտիվորեն կողմնորոշվեն այն պետության քաղաքական-իրավական հարթությունում, որի քաղաքացիներն են համարվում, պետք է տեղեկատվությունը ստանան մատչելի ձևով, և դրա տարածումն էլ փոքրամասնության այլ ներկայացուցիչների շրջանում մատչելի պետք է լինի: Այսպիսով, ի հայտ են գալիս հասարակական-քաղաքական կյանքում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների ակտիվ մասնակցության երկու իրավական տարրերի՝ մայրենի լեզվի իրավունքի և կարծիքի արտահայտման ազատության փոխկապվածությունն ու փոխապայմանավորվածությունը: Մայրենի լեզվի իրավունքը մեծ մասամբ անձնական բնույթ է կրում, ունի «անհատական բեռնվածություն» (ընտանիք, կրթություն), կարծիքի ազատությունը, ազգային փոքրամասնությունների իրավունքների ու ազատությունների պաշտպանության և պահպանման համատեքստում, ձեռք է բերում հրապարակային, քաղաքական երանգ:

Վրաստանի ազգային փոքրամասնություններն ունեն իրենց կարծիքն ազատ արտահայտելու իրավունք երկրի օրենսդրությամբ նախատեսվող հասանելի բոլոր եղանակներով ու ձևերով (պարբերականներ, ռադիո և հեռուստատեղեք և այլն) և միջոցներով (վրացերենը համապետական մակարդակում, ռուսերենը՝ ազգային այլ փոքրամասնությունների հետ հաղորդակցվելու, մայրենի լեզուն՝ փոքրամասնության ներսում և երկրի սահմաններից դուրս հայրենակիցների հետ հաղորդակցվելու համար): Ազգային փոքրամասնությունների լեզվական իրավունքների մասին 1998թ. Օսլոյի հանձնարարականները Վրաստանի օրենսդրության համար Եվրոպայի շատ երկրներում ընդունված և իրականացվող ժողովրդավարական նորմերի ստանդարտների հիմք կարող են ծառայել: Այս ամենի համատեքստում կարևոր են տվյալ փաստաթղթի հետևյալ դրույթները: Դրանում նախատեսված է ասոցիացիայի ազատության և սեփական ընտրությամբ

լեզվի իրավունքի կապ: Ավելին, «պետությունը չի կարող այդ մարմինների (ազգային փոքրամասնությունների ասոցիացիաների - *հեղ.*) նկատմամբ խտրականություն իրականացնել լեզվական հիմքի վրա և չի կարող ոչ պատշաճ ձևով սահմանափակել այդ մարմինների՝ պետական բյուջեից, միջազգային աղբյուրներից կամ մասնավոր սեկտորից ֆինանսավորման աղբյուրներ որոնելու իրավունքը» (կետ 6):

Օսլոյի հանձնարարականներով կապ է անցկացվում նաև «մայրենի լեզվից օգտվելու իրավունք» և «ԶԼՄ ազատություն» հասկացությունների միջև, որի վերաբերյալ, մասնավորապես, ասվում է. «Լրատվահաղորդումների պետական կարգավորումը հիմնվում է օբյեկտիվ և ոչ խտրական չափանիշների վրա և չպետք է օգտագործվի այն բանի համար, որպեսզի սահմանափակվի փոքրամասնությունների իրավունքները» (կետ 8):

Այս կամ այն ազգային փոքրամասնության լեզվով տրվող հաղորդումների ծավալն ու տևողությունը ուղիղ կախման մեջ են դրվում («համամասնաբար») փոքրամասնության թվաքանակից ու խտությունից և պետք է համապատասխանեն նրա դրությանն ու կարիքներին (կետ 9): Նշվում է նաև «արտասահմանյան լրատվամիջոցների» հասանելի լինելու ազատությունը, որը չպետք է սահմանափակվի «ոչ պատշաճ ձևով» (կետ 11): Ազգային փոքրամասնության անձանց՝ պետական լեզուն իմանալու և դրանով խոսելու որոշակի պարտավորության մասին նշվում է հանձնարարականների «Տնտեսական կյանք» բաժնում, որի 12-րդ կետի դրույթի համաձայն՝ «պետությունը կարող է պահանջել պաշտոնական լեզվի լրացուցիչ կիրառում... միայն այնտեղ, որտեղ կարող է առկա լինել օրինական հասարակական շահը»:

Մայրենի լեզվից օգտվելու ազատությունը հարաբերակցվում է ազգային փոքրամասնության քաղաքական իրավունքներին:

Հանձնարարականների 14-րդ կետում խոսվում է ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց՝ իրենց սեփական լեզուն վարչական իշխանությունների հետ հարաբերություններում կիրառելու համարժեք հնարավորություններ ընձեռելու մասին, «հատկապես այն շրջաններում և վայրերում, որտեղ այդ անձինք արտահայտել են նման ցանկություն և որտեղ նրանց թվաքանակը զգալի է»: Սրանից բխում է հանձնարարականների հաջորդ կետը. «Այն շրջաններում և վայրերում, որոնցում ազգային փոքրամասնությանը պատկանող անձանց թվաքանակը զգալի է, պետությունը միջոցներ է ձեռնարկում, որպեսզի ապահովի շրջանային և տեղական պետական մարմինների ընտրովի անդամների կողմից նաև ազգային փոքրամասնության լեզուն կիրառելու հնարավորությունը՝ այդ մարմինների հետ կապված գործունեության ընթացքում»:

Ազգային փոքրամասնությունների լեզվական իրավունքների պաշտպանությունը անկախ ազգային ինստիտուտների (օմբուդսմեն կամ մարդու իրավունքների գծով հանձնաժողովներ) մատչելիության միջոցով՝ պետք է ապահովվի պետության կողմից (կետ 16):

Այսպիսով, ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց լեզվական իրավունքներում նկատվում է հետևյալ օրինաչափությունը: Լեզուն՝ որպես հաղորդակցման միջոց, մարդուն տրվում է բնությունից, դրսևորվում է սոցիալական հաղորդակցման գործընթացում և զարգանում անհատի անձնական ջանքերի միջոցով: Պետությունը, որի քաղաքացին է ազգային փոքրամասնության լեզուն կրողը, պետք է նախ ստեղծի լեզվից օգտվելու համարժեք պայմաններ (անխտրականություն, այլ անձանց հետ կապերի հաստատման անսահմանափակություն, լեզվի զարգացման բարենպաստ պայմաններ, նրա դասավանդում և այլն) և երկրորդ՝ լեզվական իրավունքների խախտումներից պաշտպանության իրական մեխանիզմներ ապահովի:

1998թ. Օսլոյի հանձնարարականները կազմվել են հենց պետությունների պարտադրման տեսանկյունից: Դրանցում լեզվական իրավունքները հաճախ կապվում են որոշակի շրջաններում ազգային փոքրամասնությունների զգալի թվաքանակի առկայության հետ:

Շրջանային լեզուների և փոքրամասնությունների լեզուների 1992թ. Եվրոպական խարտիան տալիս է «տարածք, որտեղ օգտագործվում է շրջանի լեզուն կամ փոքրամասնության լեզուն» հասկացության սահմանում: Դա այն «աշխարհագրական շրջանն է, որտեղ հիշյալ լեզուն այնպիսի թվով բնակիչների հաղորդակցման միջոցն է, որն արդարացնում է պաշտպանության և խրախուսման՝ այս խարտիայով նախատեսվող տարբեր միջոցառումների ընդունումը» (հոդված 1): Խարտիան հռչակում է, որ պետությունները պետք է հիմնեն իրենց քաղաքականությունը, օրենսդրությունը և գործունեությունն այնպիսի նպատակների ու սկզբունքների վրա, ինչպիսիք են հասարակական և անձնական կյանքում «...շրջանների լեզուների և փոքրամասնությունների լեզուների կիրառմանն աջակցելը և/կամ խրախուսելը» և «աջակցությունը միջազգային հաղորդակցությունների համապատասխան տեսակների այս խարտիայի ընդգրկած ոլորտներում փոքրամասնությունների՝ երկու և ավելի պետություններում նույնական կամ նման ձևով օգտագործվող լեզուների կիրարկմամբ» (հոդված 7):

Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին 1995թ. Շրջանակային կոնվենցիայի 15-րդ հոդվածը պետությանը պարտավորեցնում է «ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց համար ստեղծել մշակութային, հասարակական և տնտեսական կյանքին ու մասնավորապես՝ իրենց վերաբերող հարցերում պետական գործերի վարմանն

արդյունավետ մասնակցելու անհրաժեշտ պայմաններ»:

Վրաստանի ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների մեծամասնությունը չի տիրապետում երկրի պետական լեզվին: Դա հատկապես խիստ արտահայտված է ազգային փոքրամասնություններով հոծ բնակեցված շրջաններում, ինչպիսիք են Մամգիսե-Ջավախեթիան (հայեր) և Քվեմո-Քարթլին (ադրբեջանցիներ): «Դա ստեղծում է հիմնախնդիրների երկու շարք: Մի կողմից՝ ինտեգրման բացակայությունն օբյեկտիվորեն խոչընդոտում է քաղաքական և քաղաքացիական կյանքին փոքրամասնության իրական մասնակցությանը, նվազեցնում տնտեսական ու գործնական հաջողությունների հասնելու հնարավորությունները: Նման շրջաններում ապրող փոքրամասնությունների ներկայացուցիչները լավ չեն տեղեկացված քաղաքական կյանքի մասին, նրանք լրացուցիչ դժվարությունների են հանդիպում պետական մարմինների հետ հարաբերություններում, իրենց սոցիալապես օտարված են զգում մեծամասնությունից: Մյուս կողմից՝ փաստը, որ բնակչության մեծ թվով խմբեր չեն տիրապետում վրացերենին, վրացի բնակչությանը զգոնության է մղում. նրանց թվում է, թե փոքրամասնությունների ներկայացուցիչները բավականաչափ լոյալ չեն վրացական պետության հանդեպ» [1]: Երկրի կենտրոնից ազգային փոքրամասնությունների գերակշիռ հոծ բնակչություն ունեցող շրջանների կտրվածությունը կրում է ոչ միայն աշխարհագրական, այլ նաև սոցիալ-տնտեսական ու քաղաքական բնույթ և հատկապես զգալի է սոցիալ-մշակութային առումով: Այս վերջինին էլ վերաբերում է պետական լեզվի չիմացությունը: Հատկանշական է, որ վրացի փորձագետ Գ.Նոդիան խոսում է «վրացի բնակչության զգոնության» մասին, որը կասկածում է, թե՛ «փոքրամասնությունների ներկայացուցիչները բավականաչափ լոյալ չեն վրացական պետության հանդեպ»: Մեր կարծիքով՝ լեզվի չիմացությունը, շրջանների սոցիալ-տնտեսական և քաղաքական կտրվածությունը կենտրոնից հիմք են տալիս խոսելու մի քանի տարիների ընթացքում Վրաստանի ղեկավարության վարած վնասաբեր քաղաքականության մասին: Լեզվական խտրականությունը (և ոչ միայն դա) հանգեցնում է քաղաքացիների օտարվածությանը պետությունից, որի քաղաքացիներն են հանդիսանում:

Գ.Նոդիան նշում է նաև, որ «փոքրամասնությունների մի այլ հատված ապրում է դիսպերսացված, այսինքն՝ վրացի բնակչության հետ խառը՝ նախնառաջ քաղաքներում: Այստեղ վրացերենի չիմացության մակարդակն ավելի բարձր է, քան փոքրամասնություններով հոծ բնակեցված շրջաններում, սակայն դա բոլորովին չի նշանակում, թե ցրված ապրող փոքրամասնության ներկայացուցիչները, որպես կանոն, ազատ խոսում են վրացերեն: Սովորաբար ռուսերենը և/կամ մայրենի լեզուն են հանդիսանում կրթության և հա-

դորդակցվելու գերադասելի լեզուները, իսկ վրացերենին, ավելի շուտ, տիրապետում են կենցաղային մակարդակով: Չնայած լեզվի ավելի լավ իմացությանը, քաղաքական գործընթացների մասին տեղեկացվածության ավելի բարձր մակարդակին՝ խառը բնակությամբ շրջաններում փոքրամասնության քաղաքական և քաղաքացիական մասնակցության մակարդակը ամեննին էլ բարձր չէ, երբեմն նույնիսկ ավելի ցածր է, քան հոծ բնակությամբ շրջաններում» [1, c. 64-65]: Այսպիսով, բնակության ցրվածությունը, ի տարբերություն հոծ բնակության, չի վերացնում ազգային փոքրամասնությունների քաղաքական և քաղաքացիական անտարբերությունը (ինդիֆերենտությունը), այլ ընդամենը հանգեցնում է պետական լեզվի առավել լավ իմացությանը կենցաղային մակարդակով: Այս ամենը ևս մեկ անգամ ցույց է տալիս, որ Վրաստանի կենտրոնական իշխանությունը չունի պետության պետաիրավական, սոցիալ-տնտեսական հարթությունում ազգային փոքրամասնությունների քաղաքացիներին ինտեգրելու կշռադատված ծրագիր:

Հանձնարարական և իրավաբանորեն պարտավորեցնող բնույթի (համապատասխանաբար՝ ԵԱՀԿ և ԵԽ) իրավական փաստաթղթերի վերոնշյալ «լեզվական» նորմերը նորմատիվային հիմք են տալիս Վրաստանի ներքին օրենսդրության ձևավորման և զարգացման համար:

Խոսքի ազատությունը և դրա հետ կապված՝ մայրենի լեզվից օգտվելու ազատությունը, ըստ սահմանման, հենց ազատություն է, իրավունք և ոչ թե պարտավորություն: Միևնույն ժամանակ, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները պետության քաղաքացիներ են, ուստի պարտավոր են տիրապետել այն երկրի պետական լեզվին, որի քաղաքացի են, որն էլ, իր հերթին, ստեղծում է լեզուն սովորելու բարենպաստ պայմաններ, սակայն ոչ երբեք ի հաշիվ մայրենի լեզուն իմանալու և օգտագործելու ազատությունն ու իրավունքը նվազեցնելու կամ սահմանափակելու: Ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք պետք է ունենան մայրենի լեզվից օգտվելու իրավունք ինչպես Վրաստանի ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս՝ հայրենակիցների հետ կապ հաստատելու համար: Նրանք պետք է ունենան նաև խոսքի, մատչելի բոլոր ձևերով, եղանակներով ու միջոցներով կարծիք արտահայտելու ազատություն՝ պետության օրենսդրության շրջանակներում (ակնհայտ է, որ նշված ներքին օրենսդրությունը պետք է համապատասխանի միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին, պետության ստանձնած միջազգային երկկողմ և բազմակողմ պարտավորություններին):

Կարելի է առաջարկել Վրաստանի ազգային փոքրամասնության «մարդկային չափման» լեզվական զարգացման հետևյալ սխեման: Որպես վրացական պետության քաղաքացիներ՝ ազգային փոքրամասնությանը

պատկանող անձինք ունեն վրացերենին տիրապետելու իրավունք և որոշակի պարտավորություն¹, որպես Վրաստանի մեկ կամ մի քանի ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ՝ նրանք իրավունք ունեն այլ փոքրամասնությունների անձանց հետ հաղորդակցվել ԱՊՀ սահմաններում առավել տարածված լեզվով՝ ռուսերենով, իսկ որպես իրենց ազգային (էթնիկական) իդենտիկության կրողներ՝ իրավունք ունեն խոսել իրենց մայրենի լեզվով:

Այս տարեսկզբին Թբիլիսիում անցկացվեց սեմինար՝ «Վրաստանի լեզվական քաղաքականությունը՝ հատկապես կրթական համակարգում» թեմայով, որ կազմակերպել էր շվեյցարական «CIMERA» կազմակերպությունը Բազմազգ Վրաստան համաքաղաքացիական շարժման (ԲՎՀՇ) հետ համատեղ: Առանձնապես հետաքրքիր էին սեմինարի՝ խոսքի և մայրենի լեզվով խոսելու ազատության հարցերին նվիրված թեզերը: «Կարելի է առանձնացնել երեք փուլ: Գամսախուրդիայի օրոք թույլ է տրվել ամենամեծ սխալը. սկսեցին կառուցել անկախ պետություն մինչև քաղաքացիական հասարակություն ստեղծելը: Շնարհնաձեի իշխանության շրջանում սրությունը նվազեց, չնայած դա էլ ուներ մակերեսային քաղաքական ռեսուրս: Հիմնախնդիրներն արտաքինապես գունավոր երանգավորում էին ստանում. շրջանների ներքին հակամարտածին պատճառները մնում էին նույնը: «Վարդերի հեղափոխությունից» անմիջապես հետո անգամ երանգավորման գործընթացը դադարեց: Հասարակությունը տեսավ հիմնախնդիրների ամբողջ պատկերը: Այնուհետև ամեն ինչ տեղի էր ունենում հռչակագրերի մակարդակում: Իրական տեղաշարժեր չկան, եթե չհաշվենք վրացական հեռուստատեսության Առաջին ալիքի հաղորդաշար մտցված 15 րոպեանոց հաղորդումները ազգային լեզուներով»² (Առնուլդ Ստեփանյան, ԲՎՀՇ ներկայացուցիչ): «Բազմալեզվությունը բնորոշ չէ Եվրոպային: Հատկապես այնպիսի երկրներին, ինչպիսիք են Բելգիան, Շվեյցարիան, Իսպանիան, Ֆինլանդիան: Կարևոր է ոչ միայն «հանդուրժել», այլև սատարել բազմազանությունը: Բացի պետական լեզվին սատարելուց՝ անհրաժեշտ է երաշխավորել նաև ազգային լեզուները», - ասում է «CIMERA»-ի ներկայացուցիչ Բրիտա Կորտը [2]:

Վրաստանի ռուսալեզու լրագրողների ասոցիացիայի տարեսկզբին անցկացված մամուլի ասուլիսում, որին մասնակցում էին աղբյուրաբանական,

¹ Պետական լեզվին տիրապետելու որոշակի պարտավորությունը բխում է քաղաքացիություն հասկացությունից՝ որպես կայուն իրավաբանական (իրավական) կապ մարդու և պետության միջև, որ կրում է հարաբերականորեն մշտական բնույթ և արտահայտվում է նրանց միջև օրենքով սահմանված փոխադարձ իրավունքների ու պարտավորությունների առկայությամբ:

² Տարեսկզբից Վրաստանի հեռուստատեսության Առաջին ալիքը եթեր դուրս եկավ նորացված աշխատակարգով: «Մոաբե» տեղեկատվական ծրագիրը փոխարինվեց «Մտավարի» («Գլխավորը») հաղորդմամբ. այն հեռարձակվում է վրացերեն, աբխազերեն, օսերեն, աղբյուրաբաններեն, հայերեն և ռուսերեն:

հայկական, ռուսական, քուրդ-եզդիական, հունական, օսական, գերմանական սփյուռքի առաջնորդները, ասոցիացիայի ղեկավար Միխայիլ Այդինովը նշեց, որ զանգվածային լրատվամիջոցներն անտեսում են երկրի ազգային փոքրամասնությունների հետ կապված խնդիրները: «Օրինակ՝ «Էթնիկական փոքրամասնություններ. վարդերի հեղափոխությունից մեկ տարի անց» կոնֆերանսը և մի շարք այլ միջոցառումներ փաստորեն չարժանացան ՋԼՄ ուշադրությանը: Ուշադրությունը մեծ մասամբ սևեղվում է ոչ թե Վրաստանի քաղաքացիների ընդհանուր թվի 16%-ը կազմող բնակչության այս խմբի հիմնախնդիրների վրա, այլ դիտարկվում են մտացածին անջատողական տրամադրությունները, բացասական փաստերը» [3]:

Ներկայիս իշխանությունների անտարբերությունը խոսքի ազատության հարցում առկա է նաև Վրաստանի կուսակցական քաղաքական դաշտում: Այսպես, Վրաստանի Հանրապետական կուսակցության առաջնորդ Լ.Բերձենիշվիլու կարծիքով՝ «ներկա իշխանությունը հրաժարվում է ժողովրդավարության և ինքնակառավարման զարգացումից: Վրաստանի իշխող քաղաքական ուժը չի պատրաստվում լրջորեն քննել երկրի հիմնախնդիրները և, Շևարձնաձեի վարչակազմի նման, շարունակում է նվաստացնել, անտեսել և խաբել ժողովրդին: Նրանց տարբերությունն այն է, որ Շևարձնաձեի օրոք կարելի էր խոսել գոյություն ունեցող խնդիրների մասին, իսկ նոր իշխանության պայմաններում խոսքի ազատության աստիճանը զգալիորեն նվազել է, ինչի մասին խոսում են նաև միջազգային փորձագետները» [4]:

Ժողովրդավարական պետությունն անհնար է պատկերացնել առանց խոսքի ազատության և անկախ մամուլի: Միևնույն ժամանակ, բազմազգ քաղաքացիական հասարակությունում և պետությունում ժողովրդավարական և իրավական բարեփոխումների հիմնական իրական արդյունքներից մեկը՝ կապված նաև ԵԱՀԿ և ԵԽ շրջանակներում քաղաքական ու իրավաբանական մի ամբողջ շարք պարտավորությունների կատարման հետ, ներպետական այնպիսի մեխանիզմների ստեղծումն ու ամրապնդումն է, որոնք թույլ չեն տալիս ՋԼՄ և խոսքի ազատությունն օգտագործել ազգային թշնամանքի հրահրման նպատակով, ապահովում են ազգային փոքրամասնությունների իրավունքները: ԵԱՀԿ և ԵԽ քաղաքական-իրավական գործունեության համար մշտապես հրատապ ու առաջնային բնույթ ունի խոսքի ազատության թեման՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների ապահովման առումով: Հարկ է նշել, որ այս թեման վերաբերում է ոչ միայն հետխորհրդային տարածքի իրողություններին, այլև պահպանում է հրատապությունը արևմտաեվրոպական մի շարք երկրներում: Թեման ընդգրկում է այնպիսի հարցեր, ինչպիսիք են մայրենի լեզվի դասավանդման ու դրանից օգտվելու իրավունքը, մայրենի լեզվով

տեղեկատվություն ունենալու և այն տարածելու իրավունքը, իշխանություններին մայրենի լեզվով դիմելու իրավունքը՝ հատկապես փոքրամասնության ներկայացուցիչներով հոծ բնակեցված վայրերում, փոքրամասնություններին առնչվող հարցերի վերաբերյալ որոշումների ընդունմանն ու կառավարմանը մասնակցելու իրավունքը:

2. Կրթության և մշակույթի ազատություն. - Վրաստանի 1997թ. «Կրթության մասին» օրենքով ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք ունեն մայրենի լեզվով կրթություն ստանալու իրավունք: Օրենքի 4-րդ հոդվածում ասվում է. «Պետությունը, տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացմամբ, ստեղծում է պայմաններ Վրաստանի այն քաղաքացիների համար, ում մայրենի լեզուն վրացերենը չէ, հիմնելով բազային կամ միջնակարգ կրթության այնպիսի հաստատություններ կամ սեկտորներ, որոնցում ուսուցումը կանցկացվի նրանց մայրենի լեզվով»: 1997թ. «Մշակույթի մասին» օրենքի համաձայն՝ պետությունը պարտավորվում է ստեղծել հավասար պայմաններ բոլոր շրջանների մշակութային զարգացման համար (հոդված 20):

Կրթության իրավունքի և սեփական մշակույթի զարգացման իրավունքի միջև կապը միանշանակ է: Մարդը չի կարող առանց իր կրթական մակարդակը բարձրացնելու հասնել որոշակի «մշակութային կարգավիճակի»: Միանշանակորեն սերտ և անքակտելի կապ գոյություն ունի նաև կրթության իրավունքի և մայրենի լեզվի դասավանդմանն ու դրանից օգտվելու իրավունքի միջև:

Ազգային փոքրամասնությունների կրթության իրավունքի վերաբերյալ 1996թ. Հաագայի հանձնարարականներն սկսվում են հատկանշական վերնագիր ունեցող բաժնով՝ «Միջազգային փաստաթղթերի ոգին»: Դրանում նշված են ազգային փոքրամասնությունների պաշտպանության *ընդհանուր իրավական բնույթի և կրթության իրավունքի* վերաբերյալ հատուկ հավելվածի սկզբունքները: Ըստ ընդհանուր իրավական բնույթի սկզբունքների՝ պետությունը պարտավոր է հետևել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց վիճակի բարելավմանն ուղղված միջազգային փաստաթղթերին, հետևողական լինել հավասարության հիմնական սկզբունքների հարցերում և թույլ չտալ խտրականություն: Կրթության իրավունքի վերաբերյալ սկզբունքներից կարելի է նշել հետևյալը. ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք հնարավորություն ունեն իրականացնելու իրենց ուրույնության պահպանման իրավունքը՝ «միայն այն դեպքում, եթե նրանք ստանում են մայրենի լեզվի իմացության պատշաճ գիտելիքներ կրթական գործընթացում»: Այս համատեքստում՝ գործում է

նան ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց պատասխանատվության սկզբունքը՝ «ինտեգրվել լայն ազգային հասարակությունում պետական լեզուն բավականաչափ իմանալու միջոցով» (կետ 1): Պետությունը պարտավոր է, ինքնուրույն կամ միջազգային օգնության և համագործակցության միջոցով, այնտեղ, որտեղ պահանջվում է, հատուկ միջոցներ ընդունել կրթության բնագավառում ազգային փոքրամասնությունների լեզվական իրավունքների ակտիվ իրականացման համար՝ առավելագույնս օգտագործելով առկա ռեսուրսները (կետ 4):

Շրջանային և տեղական մարմինները փոքրամասնությունների կրթական ոլորտում պետք է օժտվեն համապատասխան լիազորություններով, այսինքն՝ աջակցեն «փոքրամասնությունների մասնակցությանը շրջանային և/կամ տեղական մակարդակներում քաղաքականության ձևավորման գործընթացին» (կետ 6):

Կրթական ծրագրերին ազգային փոքրամասնությունների ակտիվ մասնակցության անհրաժեշտության մասին ընդգծվում է նաև 1999թ. Լուինդի հանձնարարականներում, որոնք այս հարցում հստակորեն զատորոշում են պետական իշխանության մարմինների և ազգային փոքրամասնությունների կազմակերպությունների իրավասությունները. «Հաշվի առնելով, որ կրթության բնագավառում ստանդարտների հաստատման պատասխանատվությունը կրում են պետական իշխանության մարմինները, փոքրամասնությունների կազմակերպությունները կարող են որոշել համապատասխան փոքրամասնությունների լեզուների դասավանդման ուսումնական ծրագրերի, նրանց մշակույթի, կամ և՛ մեկի, և՛ մյուսի բովանդակությունը» (կետ 18):

Կրթական ծրագրերի հստակ, օրենսդրորեն նախատեսված ընթացակարգերի անհրաժեշտության վերաբերյալ Հաագայի հանձնարարականները հակիրճ են և պարզ. «Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց տալով սեփական կրթական հաստատություններ ստեղծելու իրավունք՝ պետությունները չպետք է խոչընդոտեն այդ իրավունքի իրականացմանը՝ այդ հաստատությունների հիմնումն ու կառավարումը կարգավորող չափազանց բարդացված իրավաբանական և վարչական կանոնակարգեր հաստատելով» (կետ 9):

Հաագայի հանձնարարականներով նախատեսված են ազգային փոքրամասնությունների կրթական իրավունքները մի քանի մակարդակներում՝ նախնականից մինչև բարձրագույն կրթություն:

Ակնհայտ է բնակչության կրթական մակարդակից պետության սոցիալական կացության ուղղակի կախվածության փաստը: Սակայն, եթե պետությունը բավականաչափ ռեսուրսներ չունի, որպեսզի կրթության բարձ-

րագույն մակարդակները հասանելի լինեն բնակչության բոլոր խավերի, այդ թվում և ազգային փոքրամասնությունների համար, ապա պակաս ակնհայտ չէ պետության կողմից կրթության մակարդակների կամայական սահմանման անթույլատրելիության փաստը: Կրթական ոլորտում ազգային փոքրամասնությունների կարիքներին պետությունը պետք է մոտենա առանձնակի պատասխանատվությամբ և ուշադրությամբ: Ազգային փոքրամասնություններն, իրենց հերթին, պետք է ներկայացնեն ողջախոհ պահանջներ, որոնք հիմնված լինեն այնպիսի գործոնների վրա, ինչպիսիք են նրանց թվաքանակը, ժողովրդագրական խտությունը որոշակի շրջանում և/կամ բնակավայրում, ինչպես նաև այդ կառույցների ու հաստատությունների կենսունակությունը պահպանելու նրանց հնարավորությունը: Ազգային փոքրամասնության համար կապը կրթության, մշակույթի և մայրենի լեզվի միջև տարողունակ նշանակություն է ստանում Հաագայի հանձնարարականների 19-րդ կետում. «Ելնելով միջազգային փաստաթղթերով միջմշակութային կրթությանը, փոքրամասնությունների պատմության, մշակույթի և ավանդույթների նկատմամբ ուշադրությանը տրվող կարևորությունից և նշանակությունից՝ պետական կրթական գերատեսչությունները պարտավոր են ապահովել համապատասխան ազգային փոքրամասնությունների պատմության, մշակույթի և ավանդույթների ուսումնասիրության ներառումն ընդհանուր ուսումնակրթական ծրագրերում: Տվյալ պետությունում ապրող ազգային փոքրամասնությունների լեզուն սովորելու հարցում մեծամասնության ներկայացուցիչներին խրախուսելը կնպաստի հանդուրժողականության և մշակութային բազմազանության ամրապնդմանը պետությունում»:

Ազգային փոքրամասնությունների կրթական ոլորտի եվրոպական իրավական ստանդարտները ներկայացված են Շրջանային լեզուների և փոքրամասնությունների լեզուների 1992թ. Եվրոպական խարտիայում և 1995թ. Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին եվրոպական շրջանակային կոնվենցիայում: Առաջինը, որի 8-րդ հոդվածն ամբողջովին հատկացված է կրթության մասին դրույթներին, նախատեսում է կրթական մակարդակների հստակ աստիճանակարգում՝ մայրենի լեզվի դասավանդման և կիրառման հետ կապված: Այն նախատեսում է նաև բոլոր առարկաների դասավանդում միայն մայրենի լեզվով՝ կրթական գործընթացի բոլոր համապատասխան փուլերում, և դա կախման մեջ է դնում այն բանից, որ «փոքրամասնության շրջանային լեզվից օգտվող անձանց թիվն արդարացնում է դա» (մաս 2, հոդված 8): 1995թ. Շրջանակային կոնվենցիայի 12-րդ հոդվածը պետություններին պարտավորեցնում է «ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց համար ապահովել բոլոր մակարդակներում կրթություն ստանալու մատչելիության հնարավորություն»:

Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության ոլորտում միջազգայնորեն ճանաչված փաստաթուղթ է Ամեն տեսակ ռասայական խտրականության վերացման մասին 1965թ. միջազգային կոնվենցիան: Այդ փաստաթղթով սահմանվել է պետությունների կողմից ներքին, այդ թվում և օրենսդրական կարգավորման ճանապարհով, միջոցառումների ընդունման ընդհանուր իրավական նորմը. «Պետությունները պետք է ընդունեն, երբ հանգամանքները պահանջում են այդ, հատուկ և որոշակի միջոցառումներ սոցիալական, տնտեսական, մշակութային և այլ բնագավառներում՝ որոշ ռասայական խմբերի¹ կամ նրանց պատկանող անձանց պատշաճ զարգացման և պաշտպանության ապահովման նպատակով, որպեսզի նրանց համար երաշխավորվեն մարդու լիակատար և հավասար իրավունքները և հիմնական ազատությունները» (մաս 2, հոդված 2): Ազգային փոքրամասնությունների կազմակերպությունների, նրանց ինքնակառավարման տարածքային մարմինների ակտիվ և անփոխարինելի դերը սեփական կրթական հաստատություններ հիմնելու և կառավարելու գործում հիմնավորված է միջազգային իրավունքի փաստաթղթերում²: Ընդունված և հիմնավորված է նաև հետևյալ սկզբունքը. չնայած պետությունն իրավունք ունի հետևել այդ գործընթացին (ազգային փոքրամասնության կողմից իր կրթական հաստատությունների ստեղծման և կառավարման գործընթացը)՝ վարչարարական տեսակետից և իր օրենսդրությանը համապատասխան, այն չպետք է խոչընդոտի այդ իրավունքի իրականացմանը՝ չհիմնավորված պահանջներ ներկայացնելով, որոնք կարող են ազգային փոքրամասնության համար փաստորեն անհնար դարձնել սեփական կրթական հաստատությունների ստեղծումը: Ազգային փոքրամասնությունների իրավունքների և ազատությունների պաշտպանության համակարգում կրթությանն առանձնահատուկ տեղ հատկացնելու միտումն ակնհայտ է ժամանակակից միջազգային իրավական բազմաթիվ փաստաթղթերում: Դրանց համաձայն, կրթությունն անհրաժեշտ է ոչ միայն ակադեմիական կամ տեխնիկական պատրաստության ապահովման, այլ նաև այնպիսի արժեքների ամրապնդման համար, ինչպիսիք են հանդուրժողականությունը, բազմակարծությունը, ռասիզմի նկատմամբ անհաշտ վերաբերմունքը:

¹ Այս կոնվենցիայում «ռասայական խտրականություն» արտահայտությունը նշանակում է ցանկացած տարբերակում, բացառություն, սահմանափակում կամ նախապատվություն հիմնված... ազգային կամ էթնիկական ծագման հատկանիշների վրա, որոնք նպատակ ունեն... ոտնահարել կամ նվազեցնել մարդու իրավունքներն ու հիմնական ազատությունները հասարակական կյանքի քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային կամ ցանկացած այլ բնագավառներում» (մաս 1, հոդված 1):

² Օրինակ՝ Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին 1995թ. շրջանակային կոնվենցիայի 13-րդ հոդվածը. «1. Իրենց կրթական համակարգերի շրջանակներում մասնակիցներն ընդունում են, որ ազգային փոքրամասնությանը պատկանող անձինք իրավունք ունեն հիմնել և կազմակերպել իրենց սեփական մասնավոր հաստատությունները՝ կրթական և մասնագիտական պատրաստության նպատակներով»:

Միջազգային իրավունքի փաստաթղթերը նշված արժեքների և կրթության նպատակների որոշման գլխավոր պատասխանատվությունը դնում են այն պետությունների վրա, որտեղ առկա են ազգային փոքրամասնություններ: Այդ պետություններում միջէթնիկական քաղաքակիրթ և ներդաշնակ համակեցության հարցը կենսականորեն կարևոր է նրանց ներքին կայունության և արդյունավետ միջազգային սոցիալացման համար: Այդ համակեցությունն ու ներդաշնակությունը, ի թիվս այլոց, տվյալ տարածաշրջանում խաղաղության և կայունության պահպանման կարևոր գործոն են:

Ազգային փոքրամասնությունների կրթական իրավունքների ոլորտում Վրաստանի ներքին իրադրությունը հեռու է վերը նշված ստանդարտներին համապատասխանելուց: «Ինչպես և խորհրդային ժամանակներում, պետությունն ապահովում է առավել մեծ էթնիկական փոքրամասնությունների՝ մայրենի լեզվով (մասնավորապես՝ ռուսերեն, հայերեն, ադրբեջաներեն, օսերեն) միջնակարգ կրթություն ստանալու հնարավորությունը. գործելակերպ, որն ինքնըստինքյան պետք է ողջունել: Մասնավորապես, Վրաստանում գործում են 141 ադրբեջանալեզու դպրոցներ և դպրոցներին առընթեր 8 անկախ ադրբեջանալեզու սեկտորներ, 133 հայալեզու դպրոցներ և 20 սեկտոր, 87 ռուսալեզու դպրոցներ և 152 սեկտոր, ինչպես նաև 10 օսալեզու սեկտորներ: Սակայն ոչ վրացալեզու դպրոցներում ուսուցման հայեցակարգը գործնականում խորհրդային ժամանակների համեմատ որևէ փոփոխության չի ենթարկվել: Ավելին, հաճախ նման դպրոցներին դասագրքերով ապահովումը կախված է հարևան պետությունների բարի կամքից: Արդյունքում՝ ուսուցումն այդ դպրոցներում այնպիսին է, որ երիտասարդները չեն պատրաստվում որպես Վրաստանի լիարժեք քաղաքացիներ, ընդհակառակը, այն ավելի շուտ նպաստում է արդեն նոր սերնդի մեջ օտարվածության և գետտոյացման վերարթնացմանը, ինչն էլ էթնիկական փոքրամասնությունների հիմնական խնդիրն է» [1, c. 72-73]:

Ազգային փոքրամասնությունների իրավունքների և ազատությունների պաշտպանությունը պահանջում է համալիր մոտեցում, որն արտահայտվում է մարդու և քաղաքացու անձնական, քաղաքական ու սոցիալ-տնտեսական իրավունքների ճանաչմամբ, ապահովմամբ և երաշխավորմամբ: Կրթության իրավունքը հարկ է դասել մարդու սոցիալական կարևորագույն իրավունքների շարքին, և պետությունը կրում է այդ իրավունքի ճանաչման ու ապահովման գլխավոր պատասխանատվությունը: Որպեսզի ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք հաղթահարեն օտարվածության և «գետտոյացման» վիճակը, անհրաժեշտ են պետության (որի քաղաքացին են հանդիսանում) առաջնահերթ, ընդ որում՝ համալիր և համակարգված բնույթի ջանքերը՝ ուղղված քաղաքացիների ոչ միայն սո-

ցիալական, այլև քաղաքական իրավունքների իրական ապահովմանը:

Մարդն օտարվում է պետությունից, նրա քաղաքացիական դիրքորոշումը հասարակությունում մարզինալացվում է, իրավունքի երկու սուբյեկտների (մարդ-քաղաքացու և պետության) միջև ստեղծվում է անջրպետ այն ժամանակ, երբ տվյալ պետությունում չկան ոչ միայն մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության հստակ և արդյունավետ մեխանիզմներ, այլև ազգային փոքրամասնությանը պատկանող մարդու իրավունքների օրենսդրական ճանաչումն ու կարգավորումը: Քաղաքացիական օտարվածությունը գումարվում է էթնիկականին, մեկը գորեղանում է մյուսով, և արդյունքում՝ պետության քաղաքացու իրավական կարգավիճակը «կորչում» է փաստացի, բայց մինչ օրս օրենսդրորեն չամրագրված կարգավիճակի՝ ազգային փոքրամասնությանը պատկանող անձի կարգավիճակի ֆունին: Այլ խոսքերով՝ ազգային փոքրամասնությանը պատկանող անձի կարգավիճակի իրավական կարգավորվածության և պաշտպանվածության բացակայությունը հանգեցնում է էթնիկական և քաղաքացիական պատկանելությունների բախման, մարդն առաջին հերթին զգում է իր էթնիկական ինքնությունը, իսկ քաղաքացիականը, եթե գոյություն էլ ունի, ապա միայն երկրորդական դերերում: Ցանկացած պետության կայունությանն սպառնացող այս բացասական միտումը «կոտրել» կարելի է բացառապես իրավական գործիքներով, կշռադատված քաղաքականությամբ, այդ թվում (և, հնարավոր է, առաջին հերթին) կրթության բնագավառում:

Ազգային փոքրամասնությունների լեզվի, կրթության և ակտիվ քաղաքացիական դիրքորոշման անքակտելիությունը, նրանց իրավական ապահովվածությունը և երաշխավորվածությունը պետության կողմից՝ բազմազգ ժողովրդավարական երկրի անհրաժեշտ տարրերն են:

Մինչդեռ Վրաստանի իրականությունը վկայում է, որ «պետական հաստատություններում աշխատում են բացառապես վրացերենով, ազգային փոքրամասնությունների լեզվով բարձրագույն կրթություն ստանալու հնարավորություն գրեթե չկա, չափազանց դժվար է աշխատանք գտնել, եթե վրացերեն չգիտես, զանգվածային լրատվամիջոցները գրեթե բացառապես վրացերեն են: Նշանակում է՝ ոչ վրացական դպրոցների համակարգի միջոցով պետությունը սեփական ապագա քաղաքացիներին դուրս է մղում հասարակությունից, զրկում նրանց սեփական երկրում հաջողության հասնելու հնարավորությունից» [1, c. 91]:

Անհրաժեշտ է նշել, որ «սեփական ապագա քաղաքացիների դուրսմղումը» տեղի է ունենում ավելի շուտ ոչ թե ոչ վրացական դպրոցների համակարգի, այլ, ինչպես նշում է վրացի փորձագետը, մարդու ակտիվ քաղաքացիական դիրքորոշման բոլոր ոլորտներում բացառապես կամ գրեթե

բացառապես Վրաստանի պետական լեզվի կիրառման միջոցով: Այնուամենայնիվ, մենք համամիտ ենք Գ.Նոդիայի հետևյալ տեսակետի հետ. «Արդարացի է, որ պետությունը համեմատաբար մեծաթիվ փոքրամասնությունների համար իրենց մայրենի լեզվով միջնակարգ կրթություն ստանալու երաշխիքներ ստեղծում է, ընդ որում՝ ոչ թե այդ լեզուներով գործող մասնավոր դպրոցներ թույլ տալով կամ արտոնելով (ինչն, ինքնըստինքյան, բնական է), այլ այդ դպրոցները ֆինանսավորելու միջոցով: Փոքրամասնությունների ներկայացուցիչները կրթության համակարգի միջոցով իրենց մշակութային և լեզվական ուրույնությունը պահպանելու իրական հնարավորություն պետք է ունենան: Ուստի ոչ վրացական դպրոցների համակարգը սկզբունքորեն պետք է պահպանվի: Բայց եթե դրանք պետական դպրոցներ են, միևնույն ժամանակ պարտավոր են պատրաստել Վրաստանի ապագա քաղաքացիների, ովքեր կկարողանան սովորել վրացական համալսարաններում (այսինքն՝ վրացերենով), աշխատել վրացական կազմակերպություններում, ծառայել վրացական բանակում..., այսինքն՝ գործառել և մրցակցել վրացական հասարակությունում» [1, c. 93]:

Ազգային փոքրամասնությունների և պետության միջև անհրաժեշտ և մշտական երկխոսության որոշակի քայլ կարելի է համարել Վրաստանի կրթության նախարարության նախաձեռնությունը, որի մասին խոսվեց 2005թ. հունվարի վերջին կայացած «Ազգային փոքրամասնություններ. վարդերի հեղափոխությունից մեկ տարի անց» վերնագիրը կրող կոնֆերանսում: Այն կազմակերպած ԲՎՀՇ-ն արձագանքեց նախարարության նախաձեռնությանը և իր կողմից առաջարկեց ստեղծել խորհրդատվական խումբ՝ բաղկացած էթնիկական փոքրամասնությունների ներկայացուցիչներից, որը նախարարության համապատասխան կառույցների հետ կմասնակցի ոչ վրացական դպրոցների և դրանց ուսումնական ծրագրերի զարգացման հայեցակարգի մշակմանը [5]:

3. Դավանանքի ազատություն. - Կարելի է առանձնացնել չորս հիմնական ինտելեկտուալ ոլորտներ, «որոնցում ամփոփվում են օպտիմալացված սոցիոմշակութային և, հետևաբար, սոցիոտնտեսական զարգացման մարդկային կարևորագույն ռեսուրսները ամենատարբեր մակարդակներում՝ ներանձնական, խմբային, լոկալ, տարածաշրջանային և, վերջապես, գլոբալ» [6]:

Էրվին Լասլոն գիտության և արվեստի հետ միասին այս ոլորտներին է դասում նաև կրոնը և կրթությունը [7]:

Կրոնական կամ համոզմունքների հիմքի վրա անհանդուրժողականության և խտրականության բոլոր ձևերի վերացման մասին հռչակագրում (ընդունված է 1981թ. նոյեմբերի 25-ին, ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի 36/55

բանաձևով) ասվում է. «Ոչ ոք չպետք է ենթարկվի խտրականության կրոնական կամ համոզմունքների հողի վրա՝ ցանկացած պետության, հաստատության, մարդկանց խմբի կամ առանձին անձանց կողմից» (հոդված 2): «Կրոնի կամ համոզմունքների հողի վրա մարդկանց խտրականությունը մարդու անձնական արժանապատվությանը հասցված վիրավորանք է և ՄԱԿ Կանոնադրության սկզբունքների ժխտում, և դատապարտվում է իբրև Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի հռչակած ու մարդու իրավունքների մասին միջազգային փաստաթղթերում մանրամասն շարադրված մարդու իրավունքների ու հիմնական ազատությունների խախտում և իբրև պետությունների միջև բարեկամական ու խաղաղ հարաբերությունների խոչընդոտ» (հոդված 3):

Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին 1950թ. եվրոպական կոնվենցիայում նշվում է. «1. Յուրաքանչյուրն ունի մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունք. այս իրավունքը ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը և իր կրոնը կամ համոզմունքները դավանելու ազատությունը ինչպես անհատապես, այնպես էլ այլ անձանց հետ համատեղ, հրապարակային կամ մասնավոր ձևով, ժամերգությամբ, կրոնական ծեսերի վարդապետությամբ ու իրականացմամբ: 2. Իր կրոնը կամ համոզմունքները դավանելու ազատությունը ենթարկվում է միայն այնպիսի սահմանափակումների, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում հասարակական անդորրի, հասարակական կարգուկանոնի, առողջության և բարոյականության պահպանման շահերից ելնելով կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության համար» (հոդված 9):

Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին 1995թ. շրջանակային կոնվենցիան իբրև պարտադիր կարգ ամրագրել է պետությունների պատասխանատվությունը դավանանքի ազատության պաշտպանության ոլորտում. «Մասնակիցները պարտավորվում են ընդունել, որ ազգային փոքրամասնությանը պատկանող յուրաքանչյուր անձ իրավունք ունի դավանել իր կրոնը կամ համոզմունքները և ստեղծել կրոնական հաստատություններ, կազմակերպություններ և ասոցիացիաներ» (հոդված 8):

Դավանանքի ազատության իրավունքը մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության իրավական համախմբի մի մասն է: Երբ որևէ երկրում ոտնահարվում են ազգային փոքրամասնության կրոնական իրավունքները, նշանակում է՝ տվյալ պետությունը ոչ միայն ոչ իրավական, ոչ ժողովրդավարական բնույթ ունի, այլև բավականաչափ քաղաքակիրթ չէ: Կրոնական հանդուրժողականությունը հատկապես հրատապ և

արդիական է մեր օրերում: Անթույլատրելի է չճանաչել կամ սահմանափակել կրոնական իրավունքներն ու ազատությունները¹, եթե դրանք իրականացվում են ներքին օրենսդրության շրջանակներում՝ միջազգային իրավունքի համընդհանուր սկզբունքներին և նորմերին, պետության ստանձնած միջազգային պարտավորություններին² համապատասխան: Միջազգային դիտորդները նշում են, որ, օրինակ, Վրաստանի հայերի կրոնական իրավունքները չեն ոտնահարվում՝ վրացիների ու հայերի բազմադարյա հարևանության, ինչպես նաև երկու դավանանքների քրիստոնեական-դոգմատիկ սկզբունքների նմանության արդյունքում: Հետևություն է արվում, որ հայերը Վրաստանում ավելի շատ խտրականության են ենթարկվում ազգային, այլ ոչ թե կրոնական հատկանիշի հիման վրա [8]: Սակայն Վրաստանի հայկական պատմակրոնական հուշարձանների շուրջ վերջին իրադարձությունների շարքը ասվածը կասկածի ենթարկելու հիմքեր է տալիս: 2005թ. սկզբին անցկացված Վրաստանի ռուսալեզու լրագրողների ասոցիացիայի վերոնշյալ մամուլի ասուլիսում այդ իրադարձություններին հայ ազգային փոքրամասնության ներկայացուցիչների տված գնահատականը կոշտ էր, բայց արդարացի. «Խիստ սուր էր վրացահայերի «Նոր սերունդ» միության ղեկավար Մարի Միկոյանի ելույթը: Այն առնչվում էր նաև Թբիլիսիի հայկական Նորաշեն եկեղեցու սրբապղծման աղմկահարույց թեմային: Որոշ ռադիկալ կոչեր, այդ թվում և հոգևորականների կողմից, չեն նպաստում հասարակության դրական գործընթացներին: Նման վերաբերմունք անհնար է պատկերացնել քաղաքակիրթ երկրներում» [3]:

Այլ ազգային փոքրամասնությունների նկատմամբ Վրաստանի կենտրոնական իշխանությունը փորձում է ընդառաջող քայլեր անել: Այսպես, ինչպես հայտարարել է Վրաստանի նախագահ Մ.Սահակաշվիլին երկրի՝ ադրբեջանցիներով խիտ բնակեցված բնակավայրեր կատարած այցելության ժամանակ (2005թ. մարտ, Ջեմո Վեձիսի), «մուսուլմանական կրոնական տոները Վրաստանում հանգստյան օրեր կհայտարարվեն» [9]:

¹ Դավանանքի կամ համոզմունքների հիմքի վրա անհանդուրժողության և խտրականության բոլոր ձևերի վերացման մասին 1981թ. Հռչակագրի 6-րդ հոդվածի համաձայն՝ մտքի, խղճի, դավանանքի կամ համոզմունքների ազատության իրավունքը ներառում է, մասնավորապես, հետևյալ ազատությունները. պաշտամունք կատարել կամ հավաքվել ըստ դավանանքի կամ համոզմունքների և ստեղծել ու պահել այդ նպատակների իրականացման վայրեր, արտադրել, հայթայթել և համապատասխան ծավալով օգտագործել անհրաժեշտ առարկաներ և նյութեր՝ կապված կրոնական ծեսերի կամ սովորույթների, համոզմունքների հետ, գրել, թողարկել և տարածել համապատասխան հրատարակումներ, քարոզել կրոնական կամ համոզմունքային հարցեր այդ նպատակի համար հարմար վայրերում, պահել հանգստյան օրերը, նշել տոներն ու ծեսեր կատարել ըստ դավանանքի և համոզմունքների, առանձին անձանց և համայնքների հետ հաստատել ու պահպանել կրոնական, համոզմունքային կապեր՝ ազգային և միջազգային մակարդակներում և այլն:

² Չեն իրականացվում կրոնական անհանդուրժողության քարոզում, պետության սահմանադրական կարգի խախտում և այլն, ինչպես, օրինակ, նշված է Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին 1950թ. եվրոպական կոնվենցիայի 2-րդ մասի 9-րդ հոդվածում:

Եվ այսպես, Վրաստանում ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության սկզբունքները գոհացուցիչ չեն, մանավանդ որ դրանք չեն որոշակիացվում ազգային փոքրամասնությունների իրավունքներն ու ազատությունները կարգավորող օրենսդրական ակտերում և, համապատասխանաբար, չեն նախատեսում դրանց իրականացման հստակ մեխանիզմներ ու ապահովման երաշխիքներ: Ազգային փոքրամասնությունների իրավունքների ու ազատությունների պաշտպանության մասին շինծու հայտարարությունները և մասնակի ուշադրությունն այդ իրավունքների ու ազատությունների պաշտպանության այս կամ այն կողմին՝ քաղաքական համատեքստ ունեն, ինչն օգտագործվում է ներքին և արտաքին ուժերի կողմից և հեռու է Վրաստանի փոքրամասնությունների իրավական պաշտպանվածության իրական բարելավումից:

**3. Տեղական ինքնակառավարումը և ազգային
փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը.
միջազգային մոտեցումներն ու վրացական իրականությունը**

Իրական իրավունքներ ու ազատություններ ունենալը և ներպետական ու արտաքին ուժերի կողմից դրանց իրական պաշտպանությունը հնարավոր են ազգային փոքրամասնությունների՝ գոնե տեղական նշանակության իրական ու արդյունավետ իշխանական լիազորությունների պարագայում: Վերջինս ենթադրում է որոշակի տարածքում որոշակի գործունեության իրականացման պատասխանատվության ստանձնում: Խոսքը ազգային փոքրամասնության տարածքային ինքնակառավարման մասին է, որի օգնությամբ այն դառնում է ներպետական քաղաքական-իրավական կարգի որակապես նոր սուբյեկտ: Այս պարագայում ազգային փոքրամասնությանը կվերաբերվեն ոչ թե որպես տարանջատված անհատների հանրագումարի, որոնք հավակնում են միայն իրենց իրավունքների ու ազատությունների անհատական պաշտպանությանը, այլ որպես համակարգի, քաղաքական-իրավական ամբողջության՝ իր լիազորություններով, իրավասություններով և կառավարման իր կարգավիճակին համապատասխան պատասխանատվությամբ: Տարածքային ինքնակառավարման իրավունքը սերտորեն կապված է քաղաքացիների քաղաքական ասոցիացիաների իրավունքի հետ: Ազգային փոքրամասնությունների ասոցիացիաների ազատությունը երաշխավորվում է ԵԱՀԽ 1990թ. կոպենհագենյան փաստաթղթի 32.6 կետով և Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին 1995թ. շրջանակային կոնվենցիայի 7-րդ հոդվածով: ԵԱՀԿ 1992թ. հելսինկյան փաստաթղթի VI բաժնի 24-րդ կետում նշվում է, որ կազմա-

կերպության անդամ պետությունները պարտավոր են ապահովել «ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների ու հիմնական ազատությունների իրականացումը՝ անհատապես կամ այլոց հետ համատեղ, ներառելով ժողովրդավարական ընթացակարգերին համապատասխան՝ յուրաքանչյուր քաղաքացու մասնակցության իրավունքը իր երկրի քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային կյանքին, այդ թվում և ժողովրդավարական հիմունքներով մասնակցությունը դիրեկտիվ և խորհրդատվական մարմինների աշխատանքին ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակներով, մասնավորապես, քաղաքական կուսակցությունների ու ասոցիացիաների շրջանակներում»:

Վրաստանում էթնիկական փոքրամասնությունների կողմից քաղաքական կուսակցությունների ստեղծումը հանդիպում է դիմակայության: Երկրի քաղաքական ընտրանին բացասական վերաբերմունք ունի էթնիկական փոքրամասնությունների քաղաքական կուսակցությունների գաղափարի նկատմամբ: «Նման կուսակցությունների ստեղծումը դիտվում է իբրև տարածքային կամ հոգեբանական անջատողականություն» [1, c. 86]:

Վրաստանի իշխանություններն իրենց արդյունավետ իրավական գործունեությամբ պետք է ցույց տան այնպիսի կուսակցությունների սկզբունքային անհեռանկարայնությունը, որոնք հակասում են զարգացած ժողովրդավարական երկրներում քաղաքական ասոցիացիաների գաղափարին. դրանք պետք է ստեղծվեն գաղափարախոսական, այլ ոչ թե էթնիկական հիմքի վրա: Նման կուսակցությունների ստեղծումը, մեր կարծիքով, պայմանավորված է ազգային փոքրամասնությունների իրավունքների ու ազատությունների պաշտպանության նկատմամբ Վրաստանի իշխանությունների անտարբերությամբ, և, համապատասխանաբար, դրանք կյուլանան կամ հնարավոր է՝ իսպառ վերանան, եթե ազգային փոքրամասնություններն զգան, որ իրենց կարգավիճակը պաշտպանվում է իրականում, իսկ ներպետական մեխանիզմները գործունե կերպով ապահովում են այդ կարգավիճակը: Այս պարագայում էթնիկական փոքրամասնությունների կուսակցությունները քաղաքականից փոխակերպվում են հասարակական միավորումների, որոնք զարգացած քաղաքացիական հասարակությունում օգնում են սեփական խնդիրների քննարկմանը և իրավական ժողովրդավարական պետության համար ազգային փոքրամասնությունների իրավունքների ու ազատությունների պաշտպանության ոլորտում տիրող իրավիճակի ինքնատիպ ցուցիչ են հանդիսանում: Մակայն Վրաստանի ներկա քաղաքական դաշտը և ազգային փոքրամասնությունների իրավական անբավարար ապահովվածությունն ու պաշտպանվածությունը ցույց են տալիս, որ բազմազգ պետության համար առավել նպատակային այս դրույթի

իրականացումը երկար ժամանակ կպահանջի: Վերջին մարդահամարների միջև անցած 13 տարիների ընթացքում էթնիկական փոքրամասնությունների տեսակարար կշիռը գրեթե կրկնակի նվազել է՝ 30-ից հասնելով 16%-ի: Խորհրդարանի պատգամավորների ընդամենը 6%-ն է ներկայացնում ազգային փոքրամասնությունները: Թբիլիսիի սակրեբուլոյում (քաղաքապետարան) նրանք ընդհանրապես ներկայացված չեն: Փոքրամասնություններով խիտ բնակեցված շրջաններում տեղական օրենսդրական մարմիններում լավագույն դեպքում կան մեկ կամ երկու պատգամավոր [2]:

1999թ. գումարման խորհրդարանում փոքրամասնությունները ներկայացված են 14 պատգամավորով (նույն 6%-ը), ընդ որում՝ նրանք բոլորը իշխող՝ Վրաստանի քաղաքացիների միություն կուսակցությունից են, և խորհրդարանական կյանքին նրանց իրական մասնակցության մակարդակը նվազագույն էր (նրանց մեծ մասը երբեք հանդես չի եկել խորհրդարանի նիստերին, այն պարզ պատճառով, որ չգիտի վրացերեն, որով աշխատում է Վրաստանի խորհրդարանը) [1, c. 65]:

Վրաստանի էթնիկական փոքրամասնությունների քաղաքական կուսակցությունները ներկա պայմաններում կարող են դրական դերակատարություն ունենալ հանրապետության օրենսդիր և գործադիր իշխանության հետ երկխոսությունում իրենց ընդհանուր շահերը միասնաբար և նպատակաուղղված ձևով պարզաբանելու, պաշտպանելու և լոբբիի ենթարկելու հարցում:

Վրաստանի ազգային փոքրամասնությունների հանդեպ կիրառվող ընտրակարգը ժողովրդավարությամբ աչքի չի ընկնում: Եվրոպական իրավական ստանդարտները նշում են պետության՝ ազգային փոքրամասնությունների իրավունքները երաշխավորելու պարտավորության, պետական գործերին նրանց մասնակցության (ներառյալ ընտրություններին ձայնի և ընտրովի մարմիններում առանց խտրության ընտրվելու իրավունքը) մասին: Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին 1995թ. եվրոպական շրջանակային կոնվենցիայի 16-րդ հոդվածում նշվում է. «Մասնակիցները ձեռնպահ են մնում այնպիսի միջոցառումների ընդունումից, որոնք կազդեն ազգային փոքրամասնություններին պատկանող անձանցով բնակեցված շրջանների բնակչության կառուցվածքային կազմի վրա և ուղղված կլինեն ներկա Շրջանակային կոնվենցիայով ամրագրված սկզբունքներից բխող իրավունքների ու ազատությունների սահմանափակմանը»:

ԵԱՀԿ 1999թ. Լունդի հանձնարարականները նշում են. «Փոքրամասնությունների հոծ բնակության դեպքերում նրանց բավարար ներկայացուցչությունը կարող է ապահովվել միամանդատ տեղամասերի ստեղծման ճանապարհով»: «Փոքրամասնությունների ներկայացված լինելուն կարող

են օժանդակել համամասնական ընտրական համակարգերը» (կետ 9): Մինչև «Տեղական ինքնակառավարման և կառավարման մասին» Վրաստանի օրենքում փոփոխություններ մտցնելը (2001թ. վերջին կատարված ուղղումներ) տեղական ինքնակառավարման մարմիններում թեկնածուների առաջադրվելը հնարավոր էր միայն կուսակցական ցուցակներով, ինչը թույլ չէր տալիս հոծ բնակություն ունեցող ազգային փոքրամասնություններին տեղերում առաջադրել իրենց թեկնածուներին: Մակայն նոր խմբագրմամբ օրենքը վերացրեց այս բացը և թույլատրեց, որ ընտրատեղամասերը ազատ ձևավորվեն, ինչի արդյունքում, օրինակ, Ախալքալաքի շրջանում վրացական յուրաքանչյուր բնակավայր ունի մեկ սակրեբուլո (գյուղվարչություն), և նույնքան էլ ունեն 4-5 միավորված հայաբնակ կետերը: Այս անհամամասնությունն անդրադառնում է տեղական կառավարման իրական իրավունքների վրա, քանի որ շրջանային կառավարման մարմինը (շրջանի վարչություն) ստեղծվում է բոլոր գյուղվարչությունների նախագահներից: Այսպիսով, շրջանային մակարդակում տեղի է ունենում հայ պատգամավորների թվի արհեստական նվազեցում [10]:

Այս օրինակը վկայում է, որ վրացական իշխանությունները, մի կողմից, օգտվելով ներքին օրենսդրության՝ ընտրական իրավունքի վերաբերյալ եվրոպական ժողովրդավարական նորմերին անհամապատասխանությունից, մյուս կողմից՝ յուրովի մեկնաբանելով օրենքների գործող նորմերը, երկրի ազգային փոքրամասնությունների ընտրական իրավունքների հարցում վարում են խտրական քաղաքականություն: Շրջանների ժողովրդագրական ցուցանիշներին արհեստականորեն միջամտելու քաղաքականությունը Վրաստանի ներկայիս պետականության բնորոշ հատկանիշն է¹: Այդ միջամտությունը չի սահմանափակվում միայն վրացական բնակավայրերի արհեստական (կամայական) բազմացմամբ և ազգային փոքրամասնություններով հոծ բնակեցված բնակավայրերի համապատասխան սահմանազատմամբ: Այն արտահայտվում է նաև ոչ տարածքային ինքնակառավարման ձևերում:

Միջազգային փաստաթղթերը կտրականապես չեն ընդունում նման մոտեցումը և միանշանակորեն նշում են, որ պետությունները պարտավոր են ճանաչել իրենց իրավասության տակ գտնվող շրջանների ժողովրդագրական իրողությունները: Եվ պետությունները չպետք է խուսափեն իրենց

¹ «Ազգային փոքրամասնություններ. վարդերի հեղափոխությունից մեկ տարի անց» համաժողովում Հուլիների միության նախագահ Կիրիլյակ Յորդանովը հայտարարեց, որ վերջին մի քանի շաբաթվա ընթացքում Վրաստանի Օսլկայի շրջանում կտրուկ սրվել են հարաբերությունները մի կողմից՝ հույների, մյուս կողմից՝ աջարների ու սվանների միջև: «Հունվարին շրջանի տարբեր գյուղերում աջարներն ու սվանները հրդեհել են հույներին պատկանող 15 տուն և գոմ: Օսլկայում 37 հազ. հույներից այսօր մնացել են 2 հազարը՝ հիմնականում տարեց մարդիկ: Ցանկացած պահի աջարներն ու սվանները կարող են վնասել այստեղ մնացած հույներին: Ոչ ոք նրանց չի պատժի: Պատահական չէ, որ նրանք Օսլկայում գավթել են մոտ 2000 հունական տներ»:

պարտավորությունները կատարելուց՝ փոխելով շրջանների ժողովրդագրական նկարագիրը:

Շրջանային լեզուների և փոքրամասնությունների լեզուների 1992թ. եվրոպական խարտիան պետություններին պարտավորեցնում է հարգել «յուրաքանչյուր շրջանային լեզվի կամ փոքրամասնության լեզվի աշխարհագրությունը, որպեսզի ապահովվի այն, որ գոյություն ունեցող կամ նոր ստեղծվող վարչական բաժանումը տվյալ լեզվի օգտագործման խոչընդոտներ չստեղծի» (մաս 1, հոդված 7):

Շրջանի ժողովրդագրական ցուցանիշներին պետության տարածքային միջամտությունն արտահայտվում է վարչատարածքային արհեստական միավորման կամ բաժանման միջոցներով, ինչը խիստ բացասաբար է անդրադառնում ազգային փոքրամասնությունների տարածքային ինքնակառավարման իրավունքների վրա: Տեղական ինքնակառավարման 1985թ. եվրոպական խարտիայի 5-րդ՝ «Տեղական ինքնակառավարման տարածքների սահմանների պաշտպանություն» հոդվածում նշվում է. «Տեղական ինքնակառավարման տարածքների սահմանների փոփոխություն թույլ է տրվում միայն համապատասխան տարածքների բնակչության կարծիքի հաշվառմամբ, այդ թվում և հանրաքվե անցկացնելու միջոցով այնտեղ, որտեղ դա թույլատրելի է օրենքով»: Չնայած հանրաքվեի անցկացումը կախվածության մեջ է դրվում ներքին օրենսդրությունից, այնուամենայնիվ, հոդվածը շեշտը դնում է տեղի բնակչության կարծիքը պարտադիր հաշվի առնելու վրա:

Տեղական ինքնակառավարման հարցում անհրաժեշտ է նկատի ունենալ Վրաստանի սահմանադրական և օրենսդրական սկզբունքներն ու գործող իրավունքի նորմերը: Վրաստանի պետական-տարածքային կարգը սահմանադրական նորմերով ձևակերպված չէ: 1995թ. սահմանադրությունը ձևակերպել է նրա հնարավոր սահմանման սկզբունքը. «Վրաստանի պետական-տարածքային կարգը կորոշվի սահմանադրական օրենքով, լիազորությունների զատորոշման սկզբունքի հիման վրա, երկրի ամբողջ տարածքում Վրաստանի իրավասության լիակատար վերականգնումից հետո (մաս 3, հոդված 2): Կարելի է ենթադրել, որ Վրաստանի պետական կառույցի ապագա ձևը կներառի ինչպես ունիտար, այնպես էլ դաշնային սկզբունքներ, ընդ որում՝ վերջիններիս պարագայում նախատեսվում է լիազորությունների սահմանազատում հատկապես «սահմանադրությամբ ամրագրված»¹ այն տարածքներում, որոնք այսօր փաստորեն չեն վերահսկվում

¹ «Վրաստանը անկախ, միասնական և անբաժանելի պետություն է, ինչը հաստատված է 1991թ. մարտի 31-ին երկրի ամբողջ տարածքում, ներառյալ Աբխազիայի ԻՄՍՀ-ն և նախկին Հարավօսական Ինքնավար Մարզը, անցկացված հանրաքվեով և 1991թ. ապրիլի 9-ի՝ Վրաստանի պետական անկախության վերականգնման մասին ակտով» (մաս 1, հոդված 1):

«Վրաստանի պետության տարածքը սահմանվել է 1991թ. դեկտեմբերի 21-ի դրությամբ» (1995թ. Վրաստանի սահմանադրություն, մաս 1, հոդված 2):

կենտրոնական իշխանությունների կողմից: Իսկ այն տարածքների նկատմամբ, որոնք ցանկություն չեն հայտնել և չեն փորձել չմտնել Վրաստանի պետության կազմի մեջ, հնարավոր է կիրառվի կենտրոնի և շրջանների միջև լիազորությունների ուղղահայաց գատորոշման ունիտար սկզբունքը:

Սահմանադրության 4-րդ մասի 2-րդ հոդվածում նշվում է տեղական նշանակության հարցերի մասին, որոնք «Վրաստանի քաղաքացիները լուծում են տեղական ինքնակառավարման միջոցով՝ չվնասելով պետության ինքնիշխանությանը»: Ի հաստատումն Վրաստանի ապագա պետաիրավական բարեփոխումների վերը նշված դաշնային և ունիտար ըմբռնման, սահմանադրության 2-րդ հոդվածը նշում է. «Տեղական ինքնակառավարման մարմինների ստեղծման կարգը, լիազորությունները և նրանց հարաբերությունները պետական մարմինների հետ սահմանվում են օրգանական օրենքով»: Սահմանադրական-դաշնային և օրգանական-ունիտար մոտեցման նմանությունն ի հայտ է գալիս այն լիազորությունների հիշատակմամբ, որոնցով կօժտվեն տեղական իշխանությունները: Վրաստանի օրենսդրի սահմանադրական տրամաբանության շարունակությունն է սահմանադրության 3-րդ հոդվածը, որում թվարկված են Վրաստանի բարձրագույն պետական մարմինների բացառիկ ղեկավարման ոլորտներն ու հարցերը:

Կենտրոնական և տեղական իշխանությունների լիազորությունների սահմանագատման՝ իբրև տեղական ինքնակառավարման արդյունավետության սկզբունքի, կարևորության մասին նշվում է Տեղական ինքնակառավարման 1985թ. եվրոպական խարտիայում. «Հրապարակային լիազորությունների կատարումը, որպես կանոն, գերազանցապես պետք է դրվի քաղաքացիներին առավելապես մոտ իշխանական մարմինների վրա: Ինչ-որ գործառույթի հանձնումը իշխանության որևէ մարմնի պետք է իրականացվի որոշակի խնդրի ծավալի ու բնույթի, ինչպես նաև արդյունավետության ու խնայողության պահանջների հաշվառմամբ» (մաս 3, հոդված 4):

Այս մասին նշում են նաև 1999թ. Լուինդի հանձնարարականները. «Եվրոպայում և նրա սահմաններից դուրս կուտակված փորձը նպատակահարմար է գտնում օրենսդիր և գործադիր իշխանության որոշ լիազորություններ կենտրոնական մակարդակից շրջանայինին հանձնելը, ինչը չպետք է սահմանափակվի պետական ապարատի պարզ ապակենտրոնացմամբ և նրա գործառույթները շրջանային կամ տեղական ենթաբաժիններին տալով»: Այնուհետև նույն տեղում ասվում է. «Պետությունների սուբսիդյանության սկզբունքի համատեքստում հարկ է դրական առումով դիտարկել տարածքային լիազորություններով, ներառյալ ինքնակառավարման որոշակի գործառույթներով, օժտելու հնարավորությունը, հատկապես այն դեպքերում, երբ դա կարող է ընդարձակել իրենց վերաբերող հարցերը ինքնու-

րույն լուծելու փոքրամասնությունների հնարավորությունները» (կետ 19):

Վրաստանի գործող «Տեղական ինքնակառավարման և կառավարման մասին» թիվ 929 օրենքի (1998թ. հոկտեմբերի 16) 6-րդ հոդվածում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները բաժանվում են երկու մասի՝ պարտադիր և հատուկ: Պարտադիր լիազորություններն իրենց հերթին լինում են բացառիկ և դելեգացված: Օրենքով սահմանվում է, որ տեղական ինքնակառավարման մարմինների հատուկ լիազորությունների մեջ մտնում են այն բոլոր հարցերը, որոնք իշխանության պետական մարմինների դեկլարման առարկա չեն և տեղական նշանակության հարցեր են: Դրանով իսկ հատուկ լիազորությունները, օրենքի 6-րդ հոդվածի համաձայն, ընդունվում և իրականացվում են սուբսիդայնության սկզբունքի համաձայն:

Օրգանական օրենքի (թիվ 929) 7-րդ հոդվածն ամրագրում է իշխանության տեղական մարմինների բացառիկ և դելեգացված լիազորությունները: Այսպես, օրինակ, եթե բացառիկ լիազորություններին, այդ հոդվածից էլնելով, վերաբերում են տեղի բնակչության զագամատակարարման հարցերի լուծումը, որոշակի տարածքների և անտառային գոտիների ոռոգման համակարգի նկատմամբ վերահսկողության իրականացումը, ապա դելեգացված լիազորություններին վերաբերում են տեղական հարկերի հավաքումը, քաղաքացիական կացության ակտերի գրանցումը, քաղաքացիների զինակոչի կազմակերպումը և այլն: Եվ այսպես, իշխանության տեղական մարմինների օրենքով նախատեսված լիազորություններից էլնելով՝ պետք է ասել, որ դրանց մեծամասնությունն ունի ինչպես տեղական, այնպես էլ համապետական նշանակություն: Մի կողմ դնելով թիվ 929 օրենքով նախատեսված լիազորությունների անվանումների ու դասակարգման իրավաբանական-տեխնիկական կողմերը (օրինակ՝ եթե լիազորությունը հատուկ է, ապա արդեն բացառիկություն է ենթադրում)՝ հարկ է նշել կենտրոնական և տեղական իշխանությունների միջև իրավասությունների մանրակրկիտ և որոշակի սահմանազատման իրավական օգտակարությունը: Սակայն չպետք է մոռանալ, որ կենտրոնի և շրջանների միջև լիազորությունների հարցերը չպետք է կտրվեն այն տարածքների հիմնական բնակչության ազգային շահերից, որտեղ իրականացվում է ինքնակառավարումը: Տեղական, շրջանային և հատկապես ինքնավար վարչական մարմինները պետք է ձևավորվեն՝ հաշվի առնելով որոշակի ազգային փոքրամասնության պատմական և տարածքային առանձնահատկությունները (1999թ. Լուդի հանձնարարականների 20-րդ կետ): Այսինքն՝ այդ կառույցների կազմավորման գործընթացում չպետք է խախտվեն ազգային փոքրամասնությունների իրավունքներն ու ազատությունները, մանավանդ որ նրանք ունեն հատուկ պաշտպանվածության պատմական և տարածքային օբյեկտիվ հիմքեր: Միայն որպես ժողովրդավարական կազմավորումներ՝ տարածքային ինք-

նակառավարման կառույցները կարող են արդյունավետ իրականացնել իրենց ամրագրված լիազորությունները:

Վրաստանի ընտրական համակարգի բարեփոխման աշխատանքներում ընդգրկված են նաև ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ: Նրանք նշում են այնպիսի մոդելի անհրաժեշտության մասին, որը կապահովի բնակչության բոլոր խավերի, նրանց թվում և էթնիկական փոքրամասնությունների շահերը խորհրդարանում: Այսպես, ԲՎՀՇ-ն ավարտել է «Վրաստանի ընտրական համակարգի բարեփոխման վերաբերյալ առաջարկությունների մշակումը» (հեղինակներ՝ Խաթունա Լազազիձե, Սոֆյա Գոմելաուրի) և ներկայացրել փորձագետների քննարկմանը: Առաջարկությունների գլխավոր միտքը հետևյալն է. «Գործող ընտրական համակարգն իր ընտրական բարձր շեմով, քվեարկության կտրական մեթոդով, խառը մեծամասնական-համամասնական սկզբունքով, ամբողջ երկրի համար մեկ փակ ընտրացուցակով, միամանդատ տեղամասերով, ընտրական քվեի դուրսբերման մեթոդով և մանդատների բաշխման համակարգով կոշտ է և համեմատաբար ոչ ճկուն: Այն ավելի կիրառելի է զարգացած քաղաքացիական հասարակության և քաղաքական դաշտի պայմաններում, երբ հիմնականում քիչ թե շատ հավասարազոր քաղաքական ուժերը կարողանում են մրցակցել, իսկ հասարակությունում գոյություն ունի գիտակցված ընտրության ավանդույթ: Մեր պայմաններում գործող ընտրական համակարգը որևէ կերպ չի նպաստում գոյություն ունեցող քաղաքական դաշտի և դրանում նոր հատվածների առաջացման միտումների զարգացմանն ու բարելավմանը»: Առաջարկությունների հեղինակները նշում են, որ «ընտրական բարեփոխումն ուղղակիորեն կապված է պետության վարչական և տարածքային կառույցի բարեփոխման հարցի հետ» [11]:

Անհրաժեշտ ենք համարում նշել ընտրական համակարգի և պետության կադրային քաղաքականության կապի մասին: Ընդհանրապես, քաղաքացիների քաղաքական բոլոր իրավունքները այս կամ այն կերպ սերտորեն փոխկապված են: Այդ կապի հավասարակշռության խախտումը հանգեցնում է անձի իրավունքների խախտմանը կամ սահմանափակմանը: Փորձագետները նշում են կադրային բարեփոխումների գործընթացին ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների մասնակցության երաշխիքների ստեղծման անհրաժեշտությունը: Վրաստանի ղեկավարությունը փորձում է բարելավել ոլորտում տիրող իրավիճակը¹:

Սակայն վարչական և իրավապահպան կառույցների բարեփոխումների արդյունքում փոքրամասնությունների ներկայացուցիչների թիվը մինչ

¹ 2005թ. մարտին նախագահ Սահակաշվիլին հայտնել է, որ սկսվելու է վարչական դպրոցում ադրբեջանցի երիտասարդների ընդունելություն, որի շրջանավարտները կընդգրկվեն պետկառույցների աշխատանքներում. «Մեզ անհրաժեշտ են բոլոր ազգությունների մաքսային ծառայողներ, ինչպես նաև հարկային տեսուչներ, ոստիկաններ, նահանգապետեր, շրջանային վարչությունների ղեկավարներ և նույնիսկ նախագահ, եթե ժողովուրդն ընտրի նրան»:

օրս, ի հեճուկս ակնկալվածի, էլ ավելի է կրճատվել, ինչը հաստատում է այն միտումները, որոնք վկայում են, որ էթնիկական փոքրամասնությունների ներկայացուցիչների մեծ մասի համար հեղինակավոր սոցիալական ոլորտները փակ են» [5]: Ազգային փոքրամասնություններին վերաբերող հարցերի վերաբերյալ որոշումներ կայացնելու և կառավարմանը մասնակցելու իրավունքը «հատկապես կարևոր նշանակություն ունի, քանի որ անմիջականորեն կապված է փոքրամասնությունների ներկայացուցիչների իշխանության գործադիր և դատական մարմիններում, ինչպես նաև բոլոր մակարդակներում օրենսդրական իշխանության մարմինների ընտրություններին մասնակցության և այս առումով կարևոր ԵԽ Խորհրդարանական վեհաժողովի N1500(2001) հանձնարարականի («Ներգաղթյալների և օտարահպատակների մասնակցությունը Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների քաղաքական կյանքին») կատարման հետ, որն ընդունվել է ԵԽ ԽՎ կողմից 2001թ. հունվարին» [12]:

Զմեռային նստաշրջանի ընթացքում ԵԽ ԽՎ-ն ընդունեց բանաձև, որում քննադատել է վրացական իշխանություններին: Փաստաթղթում Վրաստանը բնութագրվում է որպես մի երկիր, որտեղ նախագահն ունի բավական մեծ լիազորություններ, չկա խորհրդարանական ընդդիմություն, գոյություն ունի թույլ քաղաքացիական հասարակություն, բավականաչափ անկախ չէ դատաիրավական համակարգը, զարգացած չէ կամ գործնականում միանգամայն բացակայում է տեղական ժողովրդավարությունը: ԵԽ ԽՎ-ն կոչ արեց երկրի իշխանություններին դրականորեն վերաբերվել երկխոսությանը, ընդունել խորհուրդները և հասարակությանը ներգրավել կենսական հարցերի քննարկմանը: Այս առնչությամբ բանաձևն ընդգծում է, որ ներկա իրադրությունում սա ամենակարևոր պահանջներից մեկն է, որը պայմանավորում է անցկացվող բարեփոխումների հաջողությունը: ԵԽ ԽՎ-ն մարդու իրավունքների ու ազատությունների և ազգային փոքրամասնությունների իրավական պաշտպանվածության ոլորտում Վրաստանի ստանձնած պարտավորությունների կատարման ժամկետ է սահմանել. մինչև 2005թ. սեպտեմբեր ստորագրել և վավերացնել Շրջանային լեզուների և փոքրամասնությունների լեզուների 1992թ. եվրոպական խարտիան և Տարածքային ընկերակցությունների ու իշխանությունների մերձսահմանային համագործակցության մասին 1980թ. եվրոպական շրջանակային կոնվենցիան, մինչև 2005թ. սեպտեմբեր վավերացնել վերանայված Եվրոպական սոցիալական խարտիան (1996թ.) և Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին 1995թ. շրջանակային կոնվենցիան:

Ինչ վերաբերում է տեղական ինքնակառավարմանը, ապա ԵԽ ԽՎ-ն երկրին կոչ է անում ավարտել տարածքային և վարչական բարեփոխումները մինչև հերթական ընտրությունները և ապահովել դրանց համապատասխանությունը տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիային՝

հատկապես բոլոր քաղաքապետերի ընտրության հարցում:

Ազգային փոքրամասնությունների նկատմամբ Վրաստանի կենտրոնական իշխանությունների վարած քաղաքականության վրա որոշակի ազդեցություն կարող են ունենալ հանրապետության էթնիկական համայնքների կազմակերպությունների ղեկավարների և ներկայացուցիչների հանդիպումները: 2004թ. սկզբին ԲՎՀՇ նախաձեռնությամբ տեղի ունեցավ Վրաստանի էթնիկական համայնքների, այդ թվում և Սամցխե-Ջավախեթիայի ու Քվեմո-Քարթլիի ղեկավարների հանդիպումը, որտեղ քննարկվեց «Վրաստանի ազգային փոքրամասնությունների իրավունքների և ազատությունների մասին» օրինագիծը: Առաջարկվեց մտցնել ազգային փոքրամասնությունների քվոտավորված ներկայացուցչության համակարգ օրենսդիր իշխանության և գործադիր կառավարման իրականացման գործընթացում, քաղաքական կուսակցությունների գրանցման օրենսդրական կարգ ազգային փոքրամասնությունների համար: Առաջարկվեց նաև ստեղծել անմիջապես Վրաստանի նախագահին առնչվող ազգային փոքրամասնությունների կազմակերպությունների կառույցներ, որոնք կունենան երկրի խորհրդարանում փոքրամասնությունների ներկայացուցիչներ ընտրելու իրավունք: 2005թ. հունվարի վերջին Թբիլիսիում, ԲՎՀՇ նախաձեռնությամբ, գումարվեց համաժողով՝ նվիրված Վրաստանում իշխանափոխությունից հետո ազգային փոքրամասնությունների վիճակին: Ջեկուցողները¹ համակարծիք էին այն հարցում, որ չնայած էական փոփոխություններին՝ հեղափոխությունից հետո ևս երկրի ազգային փոքրամասնությունները գտնվում են նույն վիճակում, ինչ և Շևարդնաձեի իշխանության օրոք: Ադրբեջանական համայնքն, օրինակ, խիստ դժգոհ էր այն բանից, որ ադրբեջանական դպրոցներում պատմության և աշխարհագրության դասավանդումն անցկացվում է վրացերենով²: Դժգոհություն էր արտահայտվում նաև այն հար-

¹ Ադրբեջանական համայնքի «Վրաստանն իմ հայրենիքն է» կազմակերպության նախագահ Ալի Բաբան, Բարեփոխումների և ժողովրդավարության զարգացման աջակցության Ախալքալաքի կենտրոնի տնօրեն Արարատ Եսայան, օսական համայնքի ներկայացուցիչ Թենգիզ Գազուն և այլոք:

² 2004թ. վերջին Վրաստանի ադրբեջանցի բնակչության շրջանում բռնկված դժգոհությունը, որ առաջ էր եկել երկրի իշխանությունների անարդարացի հողային քաղաքականության պատճառով, մատնանշում է ազգամիջյան տարաձայնության ևս մեկ պոտենցիալ օջախի առաջացման մասին: «Վրաստանը մեր հայրենիքն է, և այստեղ ապրող ադրբեջանցիներն այս երկրի քաղաքացիներն են: Մենք ոչ մի դեպքում չենք ուզում Ադրբեջանի միջամտությունը Վրաստանի ներքին գործերին», - հայտարարել է «Հեյրաթ» շարժման նախագահ Ալիթանա Ասբերովը ավելացնելով, սակայն, որ «Վրաստանի իշխանությունները չեն փոխել վերաբերմունքը ադրբեջանցիների նկատմամբ նրանց համարելով օտարներ: Ուստի նրանց նկատմամբ անարդար վերաբերումները, որ դրսևորվել է դեռևս 1996թ. հողային ռեֆորմի ժամանակ, չի փոխվել: Ասբերովը հայտարարել է, որ հենց հողի անարդարացի բաշխումն է իրավիճակի լարվածության գլխավոր պատճառը, քանի որ Վրաստանի իշխանությունները խլել են ադրբեջանական Գաչազան, Գուլար և Սադախլու գյուղերի ադրբեջանցիներին պատկանող հողերն ու տվել վրացիներին:

«Չնայած վերջին ամիսներին Վրաստանում ադրբեջանցի բնակչության հետ կապված իրադարձությունները միայն ազգային հողի վրա չէ, որ տեղի էին ունենում. դրանք կարող են ազդել Բաքվի և Թբիլիսիի հարաբերությունների վրա», - «Տրենդ» գործակալությանը հաղորդել է «Հեյրաթ» ժողովրդական շարժման վարչության ղեկավար, Վրաստանի Բորգալիի շրջանի բնակիչ Շամիլ Մուրադովը (2005թ. փետրվար): «Վրաստանի ադրբեջանցիները գործազուրկ են, գոյության պահպանման միակ միջոցը հողն է, և երբ այն չկա, հակամարտությունը բնական է»: Նրա կարծիքով՝ Վրաստանի կառավարությունը չի ցանկանում հողը հատկացնել ոչ վրացիներին, և այդ պատճառով առաջանում են կոնֆլիկտներ. «Եթե օրենքը նույնը չէ Վրաստանի ամբողջ բնակչության համար, ապա մենք այն երբեք չենք ընդունի»:

ցում, որ մինչ օրս իրական միջոցներ չեն ձեռնարկվել փոքրամասնությունների տնտեսական վիճակի բարելավման ուղղությամբ: Այսպես, խոսելով Ջավախքի մասին՝ Արարատ Եսայանը նշեց, որ «Թբիլիսիում կենտրոնական իշխանության փոխվելուց հետո միակ փոփոխությունն Ախալքալաքում տեղի իշխանության փոփոխությունն է, ուրիշ ոչինչ» [13]:

Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության ոլորտի միջազգային իրավական սկզբունքներն ու նորմերը խիստ պարզորոշ ձևով ընդգծում են փոքրամասնություններին իշխանական լայն լիազորություններով օժտելու անհրաժեշտությունը տեղական մակարդակում, հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական կյանքի այն բնագավառներում, որտեղ փոքրամասնությունների շահերը լրացուցիչ պաշտպանվածություն են պահանջում և որտեղ օբյեկտիվ բնույթի այնպիսի գործոններ, ինչպիսիք են թվային գերազանցությունն ու խտությունը, որոշիչ դերը շրջանի կյանքում, մատնանշում են տեղական ինքնակառավարումն արդյունավետ իրականացնելու ազգային փոքրամասնությունների կարողությունը:

Եզրակացություն

Իր ինքնիշխանության պետաիրավական իրավասության ծավալման տարածքում բարձրագույն, միասնական և անկախ իշխանություն ունենալու համար պետությունը պարտավոր է ճանաչել և ապահովել, երաշխավորել և պաշտպանել մարդու իրավունքներն ու ազատությունները: Բազմազգ պետությունում, որտեղ, բացի տիտղոսակիր (պետականակերտ) ազգից, որն ունի պետություն կազմավորելու քանակական և որակական գերազանցություն (պատմական իրավունքներ, քաղաքակիրթ ժողովրդավարական պետություն ստեղծելու կարողություններ և հնարավորություններ և այլն) և որտեղ առկա են ազգային փոքրամասնություններ (որոնք ունեն քաղաքացիական հասարակության ձևավորման ու զարգացման և երկրի ժողովրդավարացման գործընթացին իրենց ավանդը ներդնելու իրավունք), պարտադիր կերպով պետք է գործի ազգային փոքրամասնությունների պաշտպանվածության արդյունավետ իրավական ստանդարտների համակարգը: Միայն այս ստանդարտների իրական գործադրումից հետո կարելի է խոսել քաղաքական, առավել ևս՝ իրավական առումով պետության կայացածության մասին: Այսպիսով, եթե պետականակերտ էթնոսի (տիտղոսակիր ազգ) համար ազգային փոքրամասնությունների իրավունքների ու ազատությունների պաշտպանության միջազգային-իրավական ստանդարտների ընկալումը և դրանց կիրառումը ներպետական կյանքում պարտականություն է, ապա ազգային փոքրամասնության համար այս ստանդարտների հաստատումն ու արդյունավետ զարգացումը իրավունք է, իսկ

պարտականությունը օրինապահ զարգացումն է ժողովրդավարական պետության շրջանակներում, որը պաշտպանում է նրա իրավունքներն ու ազատությունները, երաշխավորում անվտանգ կենսագործունեությունը: Իրավունքների և պարտականությունների պահպանման փոխկապված և փոխապայմանավորված համակարգից ցանկացած շեղում կհանգեցնի ազգային փոքրամասնությունների պահանջների փոփոխության՝ սոցիալ-տնտեսական, մշակութային-կրթական, կրոնական և լեզվական ուժագծից դեպի սեփական զարգացման քաղաքական առանձին ուղու ուժագիծ:

Բազմազգ հանրապետության տարածքային ամբողջականության վերականգնման միակ հույսը կենսունակ ժողովրդավարական հասարակության կառուցումն է, ազգային փոքրամասնությունների իրավունքների և ազատությունների ամրապնդումն ու հարգումը այն ճանապարհն է, որի միջոցով է միայն հնարավոր ազգամիջյան երկխոսության վերսկսումն ու անցումը Վրաստանի բոլոր ազգերի ու ազգությունների ռեսուրսների խաղաղ համախմբման մակարդակ: Պետության ամբողջականության վերականգնումն անհրաժեշտ է իրականացնել ոչ թե ռազմաքաղաքական զինանոցի ուժային մեթոդներով կամ բարենպաստ արտաքին միջամտության վրա հույսը դնելով, այլ իրավական ու սոցիալ-տնտեսական մեթոդներով, ինչը ենթադրում է բարի կամքի տեր ներքին ու արտաքին բոլոր ուժերի իրական և արդյունավետ ներգրավվածություն:

Մեպտեմբեր, 2005թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Нодиа Г.*, Полиэтничность Грузии: факт, отношение к нему и политическая стратегия. // Одно общество, много этносов: Этническое многообразие и гражданская интеграция в Грузии (под ред. Нодиа Г.), Кавказский институт мира, демократии и развития, Тб., 2003.
2. *Гвенцадзе М.*, Билингвализм – языковая политика Грузии? // Многонациональная Грузия, № 2 (февраль), 2005.
3. *Джулфалакян А.*, Полиэтничность – богатство Грузии // Многонациональная Грузия, № 2 (февраль), 2005.
4. *Крылов А.*, Год Саакашвили у власти // www.povorol.ru, 25.01.2005.
5. *Адеишвили А.*, Для представителей этнических меньшинств престижные социальные ниши закрыты // Многонациональная Грузия, № 2 (февраль), 2005.
6. Рашковский Е., Религиозная сфера и интеллектуальные ресурсы человеческого развития // *Мировая экономика и международные отношения*, 2002, № 10, с. 42.
7. *Ласло Э.*, Постигание изменяющегося мира. Век бифуркации. «Наука», М., 1995.

